ՀՈՐԻԶՈՆ 40

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

horizon | HÉBDOMADAIRE ARMÉNIEN – Supplément en français | ARMENIAN WEEKLY – English supplement

VOL. 41 / No.5 (2087), 12+4+4+4 էջ / $1.75 ՅՈՒԼԻՍ 1 / 1 JUILLET / 1 JULY 2019

Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի 31-րդ հունձքով շրջանաւարտ դարձան 50 աշակերտներ

«Վ. Եւ Ա. Սարաֆեան» նախակրթարանի» եւ «Բաստրմաճեան» երկրորդականի վկայականաց բաշխման հանդիսութիւններ

Կարդալ էջ 4

«Հորիզոն»ի 2019 թուականի ուսանողական վարժողական ծրագրի գործակատարն է Յովիկ Կէտիկեան



Գանատայի աշխատանքի եւ ընկերային զարգացման պետական դրասենեակին կողմէ տրամադրուած յատուկ ֆոնտով, «Հորիզոն» շաբաթաթերթը չորրորդ տարին ըլլալով կը նախաձեռնէ ուսանողական վարժողական ծրագիր (Internship Program)։

Կարդալ էջ 8

Լաւալի քաղաքապետ Տեմերս, դաշնակցային երեսփոխաններ եւ այլ պաշտօնական հիւրեր այցելեցին Լաւալի Սուրբ Գէորգ եկեղեցւոյ քերմէսը

Կարդալ էջ 8

Ghadir

Ghadir

Meat & Restaurant

Մեր յարգոյ յաճախորդներուն կը տեղեկացնենք, թէ GHADIR մսավաճառատունն ու ճաշարանը փոխադրուած է աւելի ընդարձակ եւ յարմարաւէտ կեդրոն մը՝ նորագոյն եւ լաւագոյն ձեւով ծառայելու մեր յաճախորդներուն։

Մեր ճաշարանէն ներս կը սպասարկուին միջին արեւելեան զանազան ճաշատեսակներ, օրինակ՝ մէնէիշ, պանիրով պէօրէկ, հաւու եւ կովու միսով շաուրմա, հաւու եւ կովու միսով խորոված, մսաշոթ, չի քօֆթէ, լման հաւու խորոված, սուճուխ եւ այլ տեսակի աղանդերներ։

ՆՈՐ ՀԱՍՑԷ՝
1848 Lawrence Avenue East
Scarborough, Ontario M1R 2Y4

ՀԵՌԱՁԱՅՆ՝
(416) 750-7404 կամ (416) 750-7400

«Կոմիտասի երգարուեստը ինձի համար ուղղակի ներշնչում է»

Հարցազրոյց երգիչ Էլի Պէրպէրեանի հետ

Էլի Պէրպէրեան ծնած է Լիբանան։ Յաճախած է Լիբանանի Կիլիկեան վարժարանը, Թոչնոց բոյնը, Շամլեան-Թաթիկեան վարժարանը, Մխիթարեան վարժարանը եւ Սոֆիա Յակոբեան ֆոլէճը։ 4 տարի հետեւած է Լիբանանի Պետական երաժշտանոցի դասընթացքներուն, ապա առիթը ունեցած է երաժշտական իր ուսումը շարունակելու Գանատայի Մըգկիլ համալսարանին մէջ, զոր աւարտած է 2015-ին՝ արժանանալով մագիստրոսական կոչումին։ Լիբանանի մէջ 10 տարեկանէն սկսեալ ազգային-յեղափոխական երգերով հանդէս եկած է, ապա Համազգայինի «Ռուբէն Զարդարեան» մասնաճիւղին նախաձեռնութեամբ հրապարակուած է աշուղական երգերու իր առաջին ձայնասկաւառակը։ 2006 Օգոստոս 9-ին հրաւիրուած է Գանատա, Մոնթրէալ, Սուրբ Յակոբ եկեղեցւոյ տարեկան ֆեսթիվալին, որմէ ետք հաստատուած է Գանատա։ Էլի Պէրպէրեան այսօր, որպէս դասական, ժողովրդային եւ ազգային երգերու մեկնաբան, հանդէս կու գայ զանազան երգահանդէսներով ու ելոյթներով ոչ միայն Գանատայի, այլեւ Հայաստանի եւ Սփիւռքի մէջ։ Առայժմ հրապարակած է երեք տեսահոլովակ՝ «Արեւ, արեւ», «Դու ես» եւ «Հոփ-փա» իր երգերուն, իսկ անցնող օրերուն հրապարակուեցաւ իր «Ինձ կը մոռանամ» տեսահոլովակը։

Ստորեւ կը ներկայացնենք «Հորիզոն»ի հարցազրոյցը իր հետ.

Հ.- Այս տարի կը նշուի Կոմիտասի ծննդեան 150-ամեակը. դուք յանախ իր երգերը կը հնչեցնէք, ի՞նչ նշանակութիւն ունի ձեզի համար Կոմիտասի երգարուեստը։

Է.Պ.- Կոմիտասի երգարուեստը ինձի համար ուղղակի ներշնչում է։ Մանկութենէս հետաքրքրուած էի իրմով եւ իր ողբալի կեանքով, միեւնոյն ժամանակ՝ իրագործումներով։ Կոմիտաս 6 ամսու մանուկ կորսնցուցած է իր մայրը, այս մէկը խորապէս ազդած է իր վրայ։ Տասը տարեկանին կորսնցուցած է նաեւ հայրը։ Որբ Կոմիտասին հոգատարութիւնը ստանձնած է իր մեծ մայրը։ Մանկութեան տարիներուն ան եղած է մելամաղձոտ եւ ինքնամփոփ, ապա տարիներ ետք, երբ Փարիզի մէջ կը տառապէր հոգեկան հիւանդութենէն, նոյն որբ Կոմիտասի կերպարով կը ներկայանայ՝ մելամաղձոտ եւ ինքնամփոփ։ Տպաւորիչը այն է, սակայն, թէ ան թեւեր կ՚առնէ ու կը ձերբազատի որբութեան մելամաղձութենէն, երբ կ՚որդեգրուի եկեղեցւոյ կողմէ Էջմիածնի մէջ, կ՚անցնի Եւրոպա, կը ծանօթանայ համաշխարհային երգահաններու, ուր ուսում ստանալով հանդերձ զինք մտահոգողը կ՚ըլլայ հայ երգն ու երաժշտութիւնը։ Ապա կը սկսի շրջիլ գիւղ գիւղ եւ գրառել մեր ժողովրդական պարզունակ երգերը՝ ազգագրագէտի եւ երաժշտագէտի վարպետութեամբ։ Մեր ժողովրդական բանահիւսութեան գոհարներուն պահպանումը կը պարտինք իրեն։ Հետեւաբար Կոմիտասի անձնական կեանքէն շատ ազդուած եմ, իր նուիրումէն, նախանձախնդրութենէն եւ բծախնդրութենէն։ Ուշագրաւը այն է Կոմիտասի մշակումներուն մէջ, թէ ան հմտօրէն յաջողած է ներկայացնել գեղջուկին, պանդուխտին եւ ռամիկ ժողովուրդին պարզունակ երգերն ու երաժշտութիւնը, որովհետեւ իսկապէս դժուար է մեծ երաժշտագէտի մը համար մշակել ժողովրդական սովորական երգերը՝ պահելով անոր հարազատութիւնը։ Ըսեմ, թէ խօսելով Կոմիտասի մասին, կրկի՛ն կը խոնարհիմ անոր անձին եւ մեզի թողած ժառանգութեան դիմաց։

Հ.- Ձեր ելոյթներուն ընթացքին կը հնչեն թէ՛ դասականը եւ թէ՛ ժողովրդականը, ներառեալ pop music-ը։ Ինչպէ՞ս կրցած էք համադրել այս երկուքը, ինչպէ՞ս կրցած էք մէկտեղել այս երկու ծայրայեղութիւնները։

Է.Պ.- Իրաւունք ունիք. բաւական դժուար է արուեստագէտի մը համար մատուցել դասականը՝ իր բոլոր գոյներով, տարբեր լեզուներով, ապա՝ հարազատ տոհմիկը, եւ՝ pop-ը։ Իմ երաժշտական ճանապարհս սկսայ դասականով, այդպիսով կը փորձէի մեր մշակոյթին ծառայել եւ տարածել, բայց զգացի, որ ժողովրդային խաւեր կան, որոնց զգացումներուն հարազատ թարգմանը ժողովրդական երգարուեստն է, որմէ եկած է նաեւ անոնց անուանումը՝ ժողովրդական, հետեւաբար սկսայ մեկնաբանել նաեւ ժողովրդական երգեր։ Անդին երիտասարդութիւնը կը հակի ժամանակակից երգարուեստի pop music-*ին, այդ ալ ներառեցի իմ երաժշտական ոլորտիս մէջ։*

Ձեմ ուզեր սահմանափակուիլ երգարուեստի որոշ տեսակով մը, այլ կ՚ուզեմ ժողովուրդի՛ն երգիչը ըլլալ՝ երէց սերունդին, կրտսերին, երիտասարդին եւ բոլոր խաւերուն։ Անշուշտ դիւրին չեղաւ այս մէկը, սակայն ամէնօրեայ տքնաջան աշխատանքով, փորձերով ու յարատեւութեամբ կարելի է ամէն բան իրագործել։

Հ.- Համաշխարհայնացումը մեծ ազդեցութիւն ունեցաւ նաեւ երգարուեստին վրայ. որպէս երիտասարդ երգիչ, ինչպէ՞ս կը գնահատէք այսօրուան հայ երիտասարդին մօտեցումը հայկական երաժշտութեան եւ հայ երգին նկատմամբ։

Է.Պ.- Համաշխարհայնացումը զօրաւոր ալիք մըն է, որ բոլոր ազգերուն վրայ կ՚ազդէ։ Ուղղակի մշակոյթներուն դէմ պայքար մը կայ՝ զանոնք հալեցնելու, մէկ գոյնի վերածելու, որմէ անխուսափելիօրէն ազդուած է նաեւ մեր երիտասարդութիւնը։ Ճիշդ այդ է պատճառը, որ կ՚ուզեմ ներկայացնել նաեւ երիտասարդին սրտին խօսող երգեր, ինչպէս կ՚ընեն ժամանակակից երգիչներ, այն հեռատես երգիչները, որոնք գիտակցութիւնը ունին համաշխարհայնացումի մարտահրաւէրին։

Ուրեմն կարելի եղած չափով մենք՝ արուեստագէտներս, պէտք է հասնինք երիտասարդին։ Անշուշտ ըսել չեմ ուզեր, որ շուկայական ոճով պէտք է ըլլայ այդ մէկը, այլ՝ կարելիութեան սահմաններուն մէջ հրամցնենք իրեն հայերէն երգը թ՚ր սիրած ու թ՚ր սպասած ոճով։ Օտար երգիչներուն նորօրեայ ժանրերը՝ pop-*ը,* rap-*ը, ազդած են բոլորին վրայ, դժբախտաբար, բայց մենք ալ ձեռնածալ պիտի չմնանք, այլ պիտի փորձենք հայ երիտասարդին ուշադրութիւնը շեղել, որպէսզի հայերէ՛նը լսէ, հայերէնո՛վ արտայայտուի, ճաշակէ հայերէնը, վայելէ լեզուն եւ ըմբոշխնէ, այդ միջոցաւ նաեւ պիտի փորձենք որոշ չափով հայկական մշակոյթէն ալ պատառիկներ ներառել նման գործերու մէջ։*

Հ.- Ուրեմն, ըստ ձեզի, այսօր տակաւի՛ն կարելի է հայ երիտասարդը գրաւող հայերէ՛ն երգեր մշակել եւ առթել, որ անոնք մտիկ ընեն հայերէ՛ն երգեր ու ապրեցնեն զանոնք իրենց առօրեային մէջ։

Է.Պ.- Ըսեմ, որ երիտասարդին հասնիլը այնքան ալ հեշտ չէ այս օրերուն. նախեւառաջ չափազանց ծախսալից է այդ մէկը։ Այսինքն՝ եթէ երգիչ մը երգ մը հրապարակէ, ոչ մէկը պիտի հետաքրքրուի անով, եթէ անոր տեսահոլովակ ալ չհրապարակէ։ Այսօր երիտասարդը դժբախտաբար գերին դարձած է լատեսողական միջոցներուն, ան օրն ի բուն կը դիտէ եւ կը լսէ օտար երգերը ամէնուր՝ ռատիոյէն, հեռատեսիլէն, հաղորդակցական միջոցներէն, ընկերային հաւաքներուն եւ այլուր, հետեւաբար իր ուշադրութիւնը գրաւելու համար պէտք է մօտաւոր նոյն մակարդակի, նոյն չափանիշներով տեսահոլովակներ հրապարակել, որպէսզի հե

ԷԼԻ... Շար. էջ 8

Տեղի ունեցաւ Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի Վ. Եւ Ա. Սարաֆեան նախակրթարանի եւ Բաստրմաճեան երկրորդականի վկայականաց բաշխման հանդիսութիւնները

Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի Վարդգէս եւ Աստղիկ Սարաֆեան նախակրթարանի Զ. Կարգի «Թումանեան» հունձքի աշակերտներուն վկայականներու բաշխումի հանդէսը տեղի ունեցաւ Կիրակի, 9 Յունիս 2019-ին, կ.ե. ժամը 3-ին, Հայ կեդրոնի ՀՄԸՄ-Կամք «Հայկ Մարգարեան» մարզասրահէն ներս։ Հանդէսին ներկայ էին յարգարժան հիւրեր՝ Գերշ. Տէր Բաբգէն Արքեպիսկոպոս Զարեան՝ առաջնորդ Գանատայի Հայոց Թեմին, Գերշ. Տէր Սուրէն Արքեպիսկոպոս Գաթարոյեան՝հոգեւոր տեսուչ Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ, Արժ. Տէր Գառնիկ Ա. Քհն. Գոյունեան՝հոգեւոր հովիւ Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ, Արժ. Տէր Յակոբ Քհն. Գեադայեան՝ հոգեւոր հովիւ Լաւալի Սուրբ Գէորգ եկեղեցւոյ, մեծայարգ ներկայացուցիչներ Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ Հոգաբարձութեան, բարերարներ, պարգեւներ եւ մրցանակներ տուող հաստատութիւններու եւ միութիւններու ներկայացուցիչներ, ուսուցչական կազմի անդամներ, ծնողներ եւ պատուարժան հիւրեր։

Օրուան հանդիսավարն էր նախակրթարանի Ծաղիկ դասարանէն 4-րդ կարգի փոխ տնօրէնուհի տիկին Տիան Պայկը, որ բարի գալուստ մաղթեց ներկաներուն։ Գանատայի եւ Հայաստանի օրհներգներուն յաջորդեց ուսուցչական կազմի անդամներուն, ապա աշակերտներուն մուտքը, որմէ ետք բացման խօսքը փոխանցեց պրն. Սերժ Կոյէթ՝ աշակերտական կարգապահութեան պատասխանատուն։

Աշակերտները գեղարուեստական յայտագիր մը ներկայացուցին տիկին Դալար Հարպոյեան-Գալլօղլեանի ղեկավարութեամբ։

Առաջին հերթին Յարութ Զուլճեան, Մեղրի Իսքանտարեան, Սիլվի Քուրթուքեան, Գառնի Մարտիրոսեան, Վայք Աճէմեան, Արազ Զարեան, Տարօն Թորոսեան եւ Մանուէլ Թասլաքեան ասմունքեցին Յովհաննէս Թումանեանէն «Քառեակներ»։ Վեցերորդ դասարանի աշակերտները երգեցին «Hymne à l'amitié» *եւ նուագեցին սրինգով ու շուիով հայկական մեղեդիներու փունջ մը եւ Արման Յովհաննիսեանի «Հզօր Հայաստան»ը։ Ապա աշակերտները խմբովին ներկայացուցին* Martin Gougeon-*ի* «Candides et candidats» *թատրոնը, տիկին Հուրցի Տալալեանի օգնութեամբ։ Գեղարուեստական բաժինը մեծապէս գնահատուեցաւ հանդիսատեսներուն կողմէ։*

Անկէ ետք խօսք առաւ վարժարանիս ընդհանուր տնօրէնուհի տիկին Լորի Ապրաքեանը, որ ըսաւ. «Դուք կը ներկայացնէք վարժարանիս նախակրթարանի 39-րդ հունձքը, որ ամուր քայլերով կ՚անցնի դէպի երկրորդական վարժարան՝ շարունակելու իր ուսումը։ Այսօր, այս բեմէն, ուրախ եմ յայտարարելու, որ այս քառասունհնգամեայ վարժարանէն աւարտած են աւելի քան հազար հայորդիներ, որոնցմէ շատ շատերը մեծ յաջողութիւն արձանագրած են զանազան ասպարէզներու եւ համայնքի կեանքէն ներս։ Ուրախ ենք նաեւ հաստատելու, որ մեր շրջանաւարտներէն շատերն ալ ձեր ծնողներն են, ուսուցիչները կամ տնօրէնը։ Դուք կը քալէք ձեզի համար անոնց կողմէ կերտուած դէպի լուսաւոր ապագայ առաջնորդող լուսաւոր ճամբայէն։ Երախտագիտական խօսք կ՚ուղղենք ձեր ծնողներուն, որոնք հաւատալով հայեցի դաստիրակութեան անհրաժեշտութեան, ձեր նախակրթական ուսումը վստահեցան մեզի։ Վստահեցան, որովհետեւ մեր վարժարանէն ներս կը փոխանցուի մեր մեսրոպաշունչ լեզուն, հայոց պատմութիւնն ու մշակոյթի սէրը, որպէսզի կրենաք հայկական ոգիով ծլիլ եւ աճիլ եւ հպարտանալ ձեր ժառանգած ինքնութեամբ եւ ազգային արժէքներով»։

Տիկ. Լորի Ապրաքեան իր խօսքին մէջ նաեւ շեշտեց. «Այսօրուան հանդէսին գեղարուեստական յայտագրին ընթացքին հնչած քառեակներուն ընդմէջէն, այս տարեշրջանի հունձքը կը նուիրենք Ամենայն հայոց բանաստեղծ Յովհաննէս Թումանեանի ծննդեան հարիւրյիսուն ամեակին»։

Վկայագրերու եւ մրցանակներու բաշխումը կատարեցին Ընդհանուր տնօրէնուհի տիկին Լորի Ապրաքեան եւ ուսուցչական կազմի անդամները (ամբողջական ցանկը տեսնել ստորեւ)։

Փակման խօսքը կատարեց Գերշ. Տ. Բաբգէն Սրբ. Արք. Զարեան, որ անդրադարձաւ հայկական դպրոցի կատարած էական դերին եւ ապա տուաւ իր օրհնութիւնը։

Աւելի ուշ շրջանաւարտները անցուցին փառաւոր խրախճանք-պարահանդէս մը, ընկերակցութեամբ իրենց ծնողներուն եւ հարազատներուն, ինչպէս նաեւ տնօրէնութեան, ուսուցչական կազմին եւ վարժարանիս անձնակազմին, «Embassy Plaza» *հիւրասրահին մէջ։*

Պարգեւներ եւ մրցանակներ «Վարդգէս եւ Աստղիկ Սարաֆեան» Նախակրթարանի շրջանաւարտներուն

- Գանատայի Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանի՝ Վայք Աճէմեան

- Պոլսահայ Միութեան՝ Վայք Աճէմեան

- ՀՕՄ-ի Մոնթրէալի «Սօսէ» մասնաճիւղի՝ Ալեքսանտր Տէրտէրեան

- ՀՕՄ-ի Լաւալի «Շուշի» մասնաճիւղի՝ Արազ Ճարեան, Թիա Մարիա Մաշրըքի, Ալին Պէրպէրեան

- Մրցանակ ի յիշատակ Մարիամ եւ Ղազար Ղազարեաններու՝ Նայիրի Ճուքաքէլեան եւ Մարիէլ Սուլուքճի

- Պարգեւ տրամադրուած տէր եւ տիկ. Սերժ եւ Ալիս Բավարի Մոմճեանի կողմէ՝ Լէա Տօնապիթեան

- ՀՅԴ Գանատայի Պատանեկան Միութեան «Մհեր Զուլհաճեան» ֆոնտի՝ Յարութ Զուլճեան

- ՀՅԴ Մոնթրէալի «Միհրան Փափազեան» կոմիտէութեան՝ Վիգէն Քէչէճեան եւ Վայք Աճէմեան

- ՀՄԸՄ Կամք մասնաճիւղի վարչութեան մրցանակ՝ Մանուէլ Թասլաքեան

Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ հովիւն ու հոգաբարձութիւնը կը շնորհաւորեն եւ կը նուիրեն «Պատմութիւն Սուրբ Յակոբի Համայնքին» հատորը հետեւեալ աշակերտներուն. Մհեր Ստեփանեան, Այտա Արապաթլեան, Յարութ Զուլճեան, Վարդան Նազարեան, Գէորգ Սարգիսեան եւ Կարօ Սարգիսեան, Նայիրի Ժաքմաքէլեան, Գառնի Մարտիրոսեան, Արազ Զարեան եւ Վայք Աճէմեան

***

Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի Բաստրմաճեան երկրորդականի Ե. կարգի «Կոմիտաս» հունձքի աշակերտներուն վկայականներու բաշխման հանդիսութիւնը տեղի ունեցաւ Կիրակի, 16 Յունիս 2019-ին, ժամը 3-ին, Հայ կեդրոնի ՀՄԸՄ-Կամք «Հայկ Մարգարեան» մարզասրահէն ներս։ Ներկայ էին Գերշ. Տէր Բաբգէն Արքեպիսկոպոս Զարեան՝ առաջնորդ Գանատայի Հայոց Թեմին, Գերշ. Տէր Սուրէն Արքեպիսկոպոս Գաթարոյեան՝հոգեւոր տեսուչ Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ, Արժ. Տէր Գառնիկ Ա. Քհն. Գոյունեան՝ հոգեւոր հովիւ Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ, Արժ. Տէր Յակոբ Քհն. Գեադայեան՝ հոգեւոր հովիւ Լաւալի Սուրբ Գէորգ եկեղեցւոյ, մեծայարգ ներկայացուցիչներ Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ Հոգաբարձութեան, բարերարներ, պարգեւներ եւ մրցանակներ տուող հաստատութիւններու եւ միութիւններու ներկայացուցիչներ, ուսուցչական կազմի անդամներ, ծնողներ եւ պատուարժան հիւրեր։

Գանատայի եւ Հայաստանի օրհներգներուն յաջորդեց աւարտական դասարանի 50 աշակերտներուն մուտքը, որմէ ետք, հանդիսութեան բացման խօսքը կատարեց օրուան հանդիսավար պրն. Մհեր Գարագաշեան։

Հանդիսութեան յայտագիրը սկսաւ Յովհաննէս Թումանեանի «Լուսաւորչի կանթեղ»ը ասմունքով, Լորա Տօնապիթի եւ Ժագ Աւագեանի կատարողութեամբ, ապա խումբ մը աշակերտներ արտասանեցին Դ. Վարուժանի «Լոյս»-ը։

Ուսուցչական կազմին կողմէն անակնկալ խօսք մը փոխանցեց պրն. Ճիմի Լու, ապա խօսք առաւ վարժարանի ընդհանուր տնօրէնուհի Լորի Ապրաքեան, որ նշեց. «Հասած է այն օրը, երբ բազմաթիւ փորձառութիւններով հասունցած, յիշատակներով եւ անկրկնելի պահերով հարստացած, մնաք բարով պիտի ըսէք Ս. Յակոբ Ազգային վարժարանին, ձեր դասընկերներուն եւ ուսուցիչներուն, որոնց հետ բաժնեցիք ձեր կեանքի անմեղ, երջանիկ եւ անհոգ տարիները, բայց միաժամանակ բարձրացաք կրթութեան եւ դիտութեան աստիճաններէն, հասնելու համար դէպի լուսաւոր ապագայ տանող այսօրուան հանդիսութեան»։

Ան շեշտեց. «Այս տարեշրջանի մեր աւարտական հունձքը կը նուիրենք hայ *երաժշտութեան ազգային լեզուն յայտնաբերող, երգահան, կատարող, խմբավար, բանահաւաք, ազգագրագէտ, բանաստեղծ, մանկավարժ, դասախօս եւ երաժշտական առաջին միջազգային ընկերութեան հիմնադիր անդամներէն Կոմիտաս վարդապետի ծննդեան հարիւրյիսուն ամեակին»։*

Վկայագրերու եւ մրցանակներու բաշխումը կատարեցին ընդհանուր տնօրէնուհի տիկ. Լորի Ապրաքեան եւ ուսուցչական կազմի անդամները (ամբողջական ցանկը տեսնել ստորեւ), որմէ ետք խօսք առին Նայիրի Էլիպէքեան (ֆրանսերէն), Դանիա Նիկողոսեան (անգլերէն) եւ Ժագ Աւագեան (հայերէն), որոնք յիշեցին իրենց անցուցած օրերէն հաճելի դեպքեր եւ շնորհակալութիւն յայտնեցին իրենց ուսուցիչներուն։ Գերաշնորհ Տ. Բաբգէն Սրբ. Արք. Զարեան հանդիսութեան փակման խօսքը փոխանցեց՝ մեծապէս գնահատելով վարժարանի տնօրէնութիւնն ու ուսուցչական կազմը, չեշտելով որ այս է հայ աշակերտին տիպարը, այսպէս է, որ կը դաստիարակուին մեր շրջանաւարտները։

Աւելի ուշ, շրջանաւարտները իրենց ծնողներուն, հարազատներուն եւ բարեկամներուն հետ միատեղ Լաւալի «Embassy plaza» *շքեղ ճաշասրահին մէջ ունեցան փառաւոր խրախճանք-պարահանդէս մը, ընկերակցութեամբ իրենց ծնողներուն, հարազատներուն, տնօրէնութեան, ուսուցչական կազմին եւ վարժարանի անձնակազմին։*

Պարգեւներ եւ մրցանակներ երկրորդականի Ե. Կարգի շրջանաւարտներուն

- Համազգայինի Շրջանային եւ Մոնթրէալի «Սանահին» մասնաճիւղի վարչութիւններուն կողմէ՝ Լորա Տօնապիթ եւ Ժագ Աւագեան

- Լաւալի Ս. Գէորգ Հայց. Առաք. եկեղեցւոյ հոգաբարձութեանն՝ Նայիրի Էլիպէքեան

- Մրցանակ ի յիշատակ Սարգիս Ղազարեանի՝ Լորա Տօնապիթ

- ՀՕՄ-ի Մոնթրէալի «Սօսէ» մասնաճիւղի՝ Լորա Տօնապիթ

- ՀՕՄ-ի Լաւալի «Շուշի» մասնաճիւղի՝ Դանիա Նիկողոսեան

-ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութեան՝ Լիլի Ճուքաքէլեան

- ՀՅԴ Լաւալի «Սարգիս Զէյթլեան» կոմիտէութեան՝ Սագօ Տէկիրմէնճեան

- Գանատայի Հայ Առեւտրականներու խորհուրդին կողմէ՝ Բալիկ Մարսիլեան

- Գանատայի Հայ Առեւտրականներու Խորհուրդին կողմէ՝ Նայիրի Էլիպէքեան եւ Դանիա Նիկողոսեան

- «Սոֆիա եւ Առէն Արգումանեան» ֆոնտի՝ Ռիթա Պօղիկեան եւ Բալիկ Մարսիլեան

- Բժիշկ եւ տիկ. Փիէր Ասլանեանի կողմէ իրենց հայանուէր մեծ մօր յիշատակին՝ «Վիգթորիա Աբգարեան» տարեկան պարգեւ՝ Նայիրի Էլիպէքեան

- McGill համալսարանի կողմէ՝ Ալեք Թիւֆէնքճեան եւ Մարի Արպթալեան

- Պարգեւ տրամադրուած Քեպէգի Հայ Բժիշկներու Ընկերակցութեան (AMAQ) *կողմէ՝ Ճէնիֆըր Քասիս*

- Պարգեւ տրամադրուած տէր եւ տիկ. Սերժ եւ Ալիս Բավարի Մոմճեանի կողմէ՝ Սեպուհ Զօհրապեան

- Պարգեւ տրամադրուած բժիշկ Կարպիս Հարպոյեանի կողմէ՝ Ալեք Թիւֆէնքճեան, Ուիլիամ Նազարեան, Միքայէլ Գէորգ, Ալինա Արութունեան, Սեպուհ Զօհրապեան, Լիլի Ճուքաքէլեան, Ժագ Աւագեան, Ռիթա Պօղիկեան, Ճէնիֆըր Քասիս, Բալիկ Մարսիլեան, Լորա Տօնապիթ եւ Արին Մանուկեան

- Պարգեւ տրամադրուած պրն. Վրէժ-Արմէն Արթինեանի կողմէ՝ Ժագ Աւագեան եւ Նայիրի Էլիպէքեան

- Médaille du Gouverneur général-*ի թեկնածուներ.*

Արպթալեան Մարի
Էլիպէքեան Նայիրի
Մարսիլեան Բալիկ
Տէկիրմէնճեան Սագօ
Տօնապիթ Լորա
Աւագեան Ժագ

ՀՈՐԻԶՈՆ www.horizonweekly.ca

ՀՕՄ-ի Ծաղկոցի ամավերջի հանդէսը

Շաբաթ, 8 Յունիս 2019-ին, ՀՕՄ-ի Ծաղկոցի կոկոն դասարանի ծնողները հրաւիրուած էին վայելելու իրենց զաւակներուն «աւարտական» հանդէսը, որ տեղի ունեցաւ Ս. Յակոբ Ազգային վարժարանի «Բաստրմաճեան» սրահէն ներս։ Հանդէսին ներկայ էին Արժ. Տէր Գառնիկ Աւագ Քահանայ Գոյունեան, Ս. Յակոբ առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ Հոգաբարձութեան եւ Կրթական Գործադիր մարմնի անդամներ եւ մօտ 80 շրջանաւարտ մանուկներու ծնողները։

Իբրեւ ծնողք, ներկայ էի վայելելու այս ձեռնարկը, որ արդիւքն էր Ծաղկոցի տնօրէնութեան եւ անձնակազմին ամիսներու ժրաջան աշխատանքին։ Հայերէնով եւ ֆրանսերէնով ձեռնարկին բացումը կատարեց ՀՕՄ-ի Ծաղկոցի տնօրէնուհի տիկին Սիլվա Քէօշկերեան։ Ան ամփոփ ձեւով ներկայացուց Ծաղկոցին ընդհանուր դաստիարակչական ծրագիրը, որով հիմը կը դրուի մանուկներուն դաստիարակութեան, պատկանելիութեան եւ ինքնաճանաչման։ Տիկին Քէօշկերեան նաեւ անդրադարձաւ Ծաղկոցի անձնակազմի անսակարկ նուիրումին, ինչպէս նաեւ ծնողներուն անվերապահ աջակցութեան, որոնց շնորհիւ ՀՕՄ-ի Ծաղկոցը տարուէ տարի կը շարունակէ պատրաստել մանուկները եւ ուղարկել «մեծ դպրոց»։

Տնօրէնուհիին խօսքէն ետք, մէկ ժամուան տեւողութեամբ, հանդիսատեսները վայելեցին կոկիկ եւ հարուստ յայտագիր մը, որ անկասկած խանդավառեց ներկայ բոլոր ծնողները եւ փոխադրեց զիրենք ողիմպիական խաղերու աշխարհը։ Գանատայի, Հայաստանի եւ Ողիմպիական խաղերու քայլերգներէն ետք, բեմ բարձրացան խումբ մը մանուկներ, որոնք կը ներկայացնէին զանազան երկիրներ՝ անոնց ազգային տարազներով եւ դրօշակներով, ապա՝ եռագոյն դրօշակով եւ «Մենք ենք մեր սարերը» երաժշտութեամբ, փոքրիկները ստեղծեցին խանդավառ մթնոլորտ մը։

Յայտագրի յաջորդ բաժնով, աւարտական ութը դասարաններու աշակերտները կարգով բեմ բարձրացան եւ ներկայացուցին գեղեցիկ պարեր՝ ողիմպիական օղակներու պար, յունական, ափրիկեան, լիբանանեան եւ ռուսական պարեր, ինչպէս նաեւ մարզանքներու, մարմնամարզիկներու եւ ոտնագնդակի պարեր։ Հոս կարեւոր է յիշել նաեւ բեմի գեղեցիկ եւ օրուան պատշաճ զարդարանքը, ուր կեդրոնին զետեղուած էր ողիմպիական մեծ ջահը, իսկ շուրջը՝ եռագոյն դրօշակով խորհրդանիշեր, զանազան երկիրներու դրօշակներ եւ յաղթանակի բաժակներ։

Իւրաքանչիւր դասարանի պարերու ներկայացումներէն ետք, մեր մանուկները շարունակեցին խանդավառել մեզ՝ կատարելով փունջ մը հայկական պարեր եւ խմբային երգեր, որոնց ընթացքին դաստիարակները աւարտականներուն բաժնեցին իրենց աւարտական գլխարկները, եւ ողիմպիական ջահը անգամ մը եւս բեմ բարձրացաւ՝ նշելու համար խաղերուն աւարտը։

Յայտագրի աւարտին, տիկին Սիլվա Քէօշկերեան բեմ հրաւիրեց կոկոն դասարանի բոլոր դաստիարակներն ու դաշնակահարուհի տիկին Սիրան Պոյաճեանը եւ շնորհակալութիւն յայտնեց անոնց՝ իրենց տարած ժրաջան աշխատանքին եւ նուիրումին համար։ Ապա Ծաղկոցի Վարչական խորհուրդին կողմէ խօսք առաւ տիկին Անի Եմենիճեան եւ իր երախտագիտութեան խօսքը ուղղեց Ծաղկոցի դաստիարակներուն, տնօրէնութեան եւ վարչական կազմին, որոնց ցուցաբերած ջերմ հոգատարութեան մենք վստահած ենք մեր երեխաները։ Հանդէսի փակումը կատարեց Արժ. Տէր Գառնիկ Աւագ Քահանայ Գոյունեան, որ շնորհաւորեց Ծաղկոցի անձնակազմը, յայտնելով թէ անոնցմէ իւրաքանչիւրը արժանի է ողիմպիական բաժակի մը, որովհետեւ շնորհիւ իրենց՝ մեր փոքրիկները կ'աւարտեն «լոյսի բոյն» մը, շարունակելու համար լոյսի ճամբան։ Հանդիսութիւնը կնքուեցաւ Տէրունական աղօթքով։

Լոռի Հարպոյեան

Նոր աւանդութիւն մը Ս. Յակոբ Ազգային վարժարանէն ներս

Երէցներն ու կրտսերները դպրոցին շրջափակէն ներս միասնաբար ցանեցին ծառ մը

Անցնող շաբթուան ընթացքին մեր վարժարանէն ներս նոր աւանդութեան մը հիմը դրինք։ Երէցները եւ դպրոցիս կրտսերները՝ Ծաղիկ դասարանի աշակերտները, միասնաբար դպրոցին շրջափակէն ներս ցանեցին ծառ մը։

Այս յուզիչ եւ խորհրդանշական ծառատնկումով, անոնք սերնդափոխութեան իմաստը փոխանցեցին դպրոցի աշակերտութեան, բայց այդ ծառը նաեւ խորհրդանիշն է իրենց ինքնութեան։ Առանց առօրեայ սնունդի, գուրգուրանքի, այդ ծառը չ'աճիր, չի մեծնար եւ արմատ չի նետեր։ Դպրոցին փափաքն է, որ այս վարժարանէն ներս աշակերտներուն փոխանցուած մարդկային արժէքներով եւ հայկական մշակոյթով շարունակեն ծաղկեցնել իրենց հոգիներուն ինքնութեան ծառը։

«Մենք մեր զաւակներուն միայն երկու բան կրնանք փոխանցել. արմատներ եւ թեւեր», կ'ըսեն մեծերը։

Այցելեցէք hitunes.ca կայքէջը եւ օրական 24 ժամ ունկնդրեցէք Սառա Եղիայեանի կողմէ ընտրուած հայկական երգերը
HITUNES.CA

Ունկնդրեցէք triktrak.ca կայքէջի հայկական համացանցային ռատիոժամի երգերը օրական 24 ժամ, իսկ ամէն հինգշաբթի երեկ. ժամը 8:00 - 9:00 լսեցէք շահեկան հարցազրոյցներ
TRIKTRAK.CA

Ուրախութեամբ կը յայտարարենք որ Հայ Օգնութեան Միութեան Թորոնթոյի «Ռուբինա» Մասնաճիւղի «Տոհմիկ Օր»ը այս տարի ձօնուած է՝
ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԻՆ
Ձեռնարկը տեղի պիտի ունենայ
Շաբաթ 23 Նոյեմբեր 2019ին
Հայ Կեդրոնէն ներս
Կը խնդրուի չխաչաձեւել
ՀՕՄի «Ռուբինա» Մասնաճիւղի Տոհմիկ Օրուայ Յանձնախումբ
Թորոնթօ

Այցելեցէ՛ք Թորոնթոյի ամենօրեայ վարժարանի բարեկորոգուած կայքէջը՝ / Visit our new website
www.arsarmenianschool.ca

Voyages HAIG Travel
Ձեր բոլոր ճամբորդական կարիքներուն համար հեռաձայնել՝
(514) 284-7676
ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...
ԼԱՒԱԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ
PERMIS DE QUÉBEC
3438 Rue St-Denis, Montreal, QC H2X 3L3, Fax: 514-284-7677

Ունկնդրեցէ՛ք Գանատայի տարածքին սփռուող հայկական ռատիոժամերը՝
ՎԱՆԳՈՒՎԸՐ- «Armenian Variety Show» Coop Radio 100.5 FM
Երեքշաբթի երեկոները ժամը 6:00-7:00
ԹՈՐՈՆԹՕ- «Կիլիկիոյ Ձայն» CHTO AM 1690
Կիրակի երեկոները ժամը 8:00-11:00
ՄՈՆԹՐԷԱԼ- «Հայ Կեդրոնի Ձայն» 105.1 FM
Երկուշաբթի երեկոները՝ ժամը 9:30-12:00
Շաբաթ առաւօտները ժամը՝ 7:30-9:30
Կիրակի առաւօտները ժամը 7:00-8:00
«Վանայ Ձայն» 1450 AM
Երկուշաբթի երեկոները ժամը 8:00-10:00
ՀԱՄԻԼԹԸՆ- «Հայ Կեդրոնի» ռատիոժամ CFMU 93.3 FM
Կիրակի առաւօտեան 10:00-11:00
cfmu.mcmaster.ca

Շահումեանի անկումը

Շահումեանի կորուստը մեծ ողբերգութիւն է, սակայն սերունդները պիտի իմանան իրադարձութիւնների ստոյգ ընթացքը եւ այն, թէ շրջանը պատրա՞ստ էր ինքնապաշտպանութեան։

1992 *թուականի ամառային հիմնական իրադարձութեան նախօրէին Շահումեանում էին հաւաքուել Դաշնակցութեան մարտունակ ուժերը, որոնք տեղի ջոկատների հետ միասին անձկութեամբ սպասում էին հրամանատարութեան հրահանգին սկսելու Գետաշէնի ու Մարտունաշէնի ազատագրման գործողութիւնը։ Կարելի է կռահել, թէ ինչպիսի ոգեւորութիւն էր տիրում ռազմիկների շրջանում եւ որքան մեծ էր այն բնակավայրերի վերադարձման յոյսը, որոնք երբեք թուրքերին չեն պատկանել։ Մի քանի ամիս առաջ ազատագրուած երեք գիւղերը լիովին պատրաստ էին ինքնապաշտպանութեան, եթէ նրանց դէմ լինէր միայն դարաւոր թշնամին եւ ոչ թէ խորհրդային բանակի ահռելի զինուժը։ Շուշին, Լաչինը եւ Լաչինի շրջանը նոր էին ազատագրուել եւ հոգեցնծութեան մէջ գտնուող մարդկանց երեւակայութեան մէջ հեշտութեամբ մտապատկերւում էր ազատագրուած Գետաշէնն ու Մարտունաշէնը։ Ակնկալուող այդ գործողութեան յաջողութեան պարագային հայկական ռազմական ուժերն ուղղակի արդէն նշանառութեան տակ կը պահէին մերձակայ դաշտավայրերը եւ կարող էին սպառնալ հայոց հինաւուրց քաղաք Գանձակին, որը ներկայումս դարձել էր հակահայկականութեան առաջնային ֆորտպոստը։ Շատ երիտասարդներ էին երազում մասնակցել հայոց բնակավայրերի ազատագրման գործողութեանը, իսկ Կարօտ Մկրտչեանն ամբողջ Պաքուի առջեւ ուխտել էր տուն չվերադառնալ, մինչեւ Գետաշէնը չազատագրեն։*

Շահումեանում մանրազնին մշակուած էր Գետաշէնի եւ Մարտունաշէնի ազատագրման գրոհային գործողութիւնը, ընտրուած էին մասնակիցներն ու հրամանատարները, որոշուած էին յարձակման ուղղութիւնները։ Գործողութիւնն սկսելու հրամանը, սակայն, ձգձգւում էր, եւ անհամբերութիւնից նեղւում էին ազատամարտիկները։ Նրանց համար պարզաբանուած չէր տարածաշրջանում դերակատար երկրների նկրտումները եւ չգիտէին, թէ հակառակորդը ինչ է պատրաստւում անել։ Արցախեան բարձրագոյն հրամանատարութիւնը բաւարար տեղեկատուութիւն ունէ՞ր հակառակորդի մօտ կատարուող տեղաշարժերից, դրա մասին միայն կռահումներ կարող ենք անել։

Յունիսի 1-ին ատրպէյճանական Շեֆեկ ռազմակայանից վերսկսուել էր Շահումեանի շրջանի Կարաչինար գիւղի հրետակոծումը. գիւղի վրայ արձակուել էր 120 հրթիռ։

Ստացւում էին տեղեկութիւններ այն մասին, որ հակառակորդը կուտակւում է Էրքէջ եւ Բուզլուխ գիւղերի շրջակայքում։

...Յունիսի 12-ին ամփոփւում են հետախուզական տուեալները (մեր կողմից) «Գետաշէն» գործողութիւնն սկսելու համար։ Եւ ի վերջոյ, երբ յստակ էր, թէ երբ են սկսելու գործողութիւնը, թշնամին կանխում է մեզ եւ ինքն է առաջինն անցնում լայնածաւալ յարձակման՝ տրամադրութեան տակ ունենալով հսկայական զինուժ, մարդուժ եւ տեխնիկա։

Իրադարձութեան վերաբերեալ ԳԽ-ի կազմած Շահումեանի յանձնման պատճառները հետաքննող յանձնաժողովի նիստին հանդէս է եկել Շահէն Մեղրեանը։ Շատերի հետ ենք առիթ ունեցել զրուցելու Շահումեանի անկման մասին եւ այլեւայլ կարծիքներ, տեսակէտներ են արտայայտուել եւ նոյնիսկ վերլուծական յօդուածներ են գրուել, սակայն խնդիրն ու համապատկերը Շահէն Մեղրեանից աւելի խորը եւ ամբողջական ոչ մէկն է պատկերացրել եւ ներկայացրել։

Յունիսի 9-ին եւ 11-ին եօթ հոգուց կազմուած մեր հետախուզական խումբը մտել է Գետաշէն եւ հետախուզել այդ ամբողջ շրջանը՝ առաջիկայ գործողութիւնն անցկացնելու համար։ Ոչ մի արտակարգ փոփոխութիւն թուրքերի դիրքերում եւ նրանց ուժերում չի նկատուել։ Նոյն ամսուայ 12-ին նշանակուած էր արդէն վերջին պատրաստութիւնը Գետաշէնի ազատագրման գործողութիւնն սկսելու։ Եւ այդ վերջին նախապատրաստութեան ստուգման համար հաւաքուեցին ռազմական խորհրդի անդամները եւ ջոկատների հրամանատարները։

Նախորդ օրերի հետախուզութիւնն, ասացինք արտակարգ ոչ մի բան չէր յատնաբերել, բայց երեկոյեան ժամը 21:00-ին, երբ արդէն Վլադիմիր Կարապետեանը վերադարձել էր եւ Մեղրեանի հետ միասին գտնուում էր շտապում, ստացան առաջին ահազանգը, որ Գետաշէնի կողմից բաւականին երկար շարասիւն է գալիս եւ, հաւանաբար, տանկեր էլ կան։ 15 րոպէ յետոյ երկրորդ ազդանշանն ստացան Էրքէջից, որ Գիւրզալար գիւղի ձորից դէպի Թոդան է բարձրանում արդէն ստոյգ տանկերի շարասիւն։ Քիչ անց այդպիսի տեղեկութիւն ստացան Թալիշից, որ Ինջի գետի մօտակայքում մօտ քսան միաւոր տեխնիկա է կանգնած դէպի մեր պահակակէտերի ուղղութեամբ, ի միջի այլոց Թալիշի ինֆորմացիան ստացան Մարտակերտի ռազմական շտապի միջոցով։ Ստանալով այդպիսի տեղեկութիւններ, իսկոյն բոլորին ոտքի հանեցին եւ տուեցին թիւ մէկ հրամանը, պաշտպանական մարտեր մղելու համար։ Վաղ առաւօտեան թուրքերն անցան յարձակման։ Երեկոյեան ժամը 9:00-ից մինչեւ առաւօտեան ժամը 5:10-ը՝ այնքան ժամանակ են ունեցել որեւէ բան ձեռնարկելու համար։ Գանձակում տեղադրուած խորհրդային Զորրորդ բանակի Երկրորդ դիւիզիան փաստօրէն անցել էր թուրքերի տրամադրութեան տակ։ Մինչ այդ էլ՝ Ռուսաստանի Դաշնութիւնից Ատրպէյճանին էին յանձնել հարիւրաւոր տանկեր եւ հետեւակի մարտական մեքենաներ, հրանօթային համակարգեր եւ ականանետեր, մեծաթիւ «Գրադ» կայանքներ, ռազմական ուղղաթիռներ, ռմբակոծիչներ, Մի-6 տեսակի ռազմական ինքնաթիռներ, տասնեակ հազարաւոր ինքնաձիգներ, գնդացիրներ եւ այլն։ Նրանք ոչ միայն զինուժ են ձեռք բերել, այլեւ բարձրակարգ ռազմագէտ մասնագէտներ, գրոհային հրամանատարներ եւ տեխնիկան գործադրողներ, այսինքն՝ բարձրակարգ անձնակազմ։ Արցախին առանձնակի մեծ չափերով վնաս հասցրին այսպէս կոչուած սլաւոն օդաչուները երկնքից եւ դիպուկահարները, հրասայլորդներն ու հրետանաւորները՝ երկրի վրայ։ Սլաւոնգառացի նշանակում է ուղղափառ, սակայն խորհրդային զօրքի մէջ ուղղափառութիւնից նշոյլներ չեն մնացել, այլապէս 20-րդ դարավերջին այս էլ երկրորդ անգամ Հայաստանին ու հայութեանը՝ իրենց «ռազմավարական դաշնակցին» չէին կանգնեցնի կործանման եզրին։ Առաջին անգամ նրանք արհեստական երկրաշարժով հողին հաւասարեցրին Հայաստանի մի քանի մարզեր եւ խլեցին մի քանի տասնեակ հազար (եթէ ոչ աւելի) մարդկանց կեանք, էլ աւելի մեծ թուով դարձնելով հաշմանդամներ, անբուժելի հիւանդներ։

Զմոռանանք Առաջին Աշխարհամարտի աւարտական շրջանը, երբ պարտութիւն կրած թշնամին՝ Արեւելքի ոստիկանը շունչը փչելու վրայ էր եւ Ռուսաստանն իր զօրքերը հանեց ռազմաճակատից եւ պատերազմում անասելի կորուստներ կրած հայ զօրքերն այլեւս անկարող էին փակել հսկայական ռազմաճակատը։ Այնպէս որ պիտի հաւատալ միայն Աստծուն եւ ոչ թէ մարդուն եւ յատկապէս նոր ժամանակաշրջանի պետութիւններին։ Ինչեւէ, օգտագործելով նաեւ ռուսական բանակի ռազմավարութեան եւ մարտավարութեան ամբողջ զինանոցը, թուրքերը յարձակման անցան՝ առաջապահ ունենալով հենց սլաւոն ռազմիկներին։

Պատմական ակնարկներից էլ տեսանք, որ հայերս հազուադէպ ենք մենակ, դէմ առ դէմ առճակատուել մեր թշնամուն. մենք միշտ ունեցել ենք յաճախ մէկից աւելի հակառակորդներ, եւ սա մեր տարածաշրջանի բնոյթից է բխում։

Ցաւօք, այս անգամ մեր դէմ էին նաեւ մեր «դաբաւոր բարեկամները», որոնց դէմ կռուելը կապուած էր հոգեբանական բարդոյթների յաղթահարման հետ։ Շահումեանի հրամանատարութիւնն, ինչպէս արդէն նշել ենք, բնականաբար չէր ուզում ռուսների հետ խնդիր ունենալ եւ մինչ 92-ի Յունիսը միշտ հրահանգներ է տուել սլաւոններին թշնամու տեղ չդնել եւ չկռուել նրանց դէմ։ Ժամանակաշրջանի բարդութիւնը դրդել էր խորհրդային զօրքի ռուս զինուորին կռուելու իր բնական եւ յաւերժական դաշնակցի դէմ եւ ջուր լցնելու նաեւ Ռուսաստանի հակառակորդ միջազգային ուժերի ջրաղացին, որոնք այս պարագային գործում էին Հոբլի նախագծած ծրագրով։ Ցաւօք, խորհրդային բանակի այդ ճախաւեր գիծը շարունակուեց այնքան ակնյայտ կերպով, որ Ռուսաստանի ԳԽ պատգամաւոր Անատոլի Շաբադը 1992 թուականի Յունուարի 17-ին ելոյթ ունենալով հայկական հեռուստատեսութեամբ, դառնացած եւ զարմացած ասում է. «Ամբողջ Ղարաբաղն է յարձակման ենթարկւում, բայց Շահումեանի դէմ, իմ կարծիքով, գործում է խորհրդային բանակը»։ Իրար միացած եւ մեր դէմ ելած հակառակորդների մարդուժի եւ ռազմուժի անհամեմատ մեծութեանը գումարւում էր ուժեղի հոգեբանական գերազանցութիւնը դեռեւս լիովին չկազմակերպուած հայոց բանակի համեմատ։

Յունիսի 13-ին հակառակորդը յարձակւում է 25-րդ, 29-րդ, 16-րդ յենակէտերի վրայ... Օգնութիւն են խնդրում Հայ Պարիսը, 16-րդ յենակէտը... Հակառակորդը գրաւում է Էրքէջի հակակարկտային բարձունքները։ Նոյն օրը, ժամը 8.00-ին սկսւում է օդային յարձակումը շրջկենտրոնի եւ Պուզլուխի վրայ։ Ժամը 16-ին հրաւիրւում է ինքնապաշտպանութեան խորհրդի կարճ խորհրդակցութիւն, որը որոշում է՝ որքան հնարաւոր է բնակիչների անվնաս դուրս բերումը ռազմական գործողութիւնների գօտուց։ Այլ հնարաւորութիւն չկար եւ ժողովուրդը կարող էր պարզապէս վերածումը կրաւորական նահատակութեան նոր օրինակի։

Ժամը 23.00-ին Շահումեանի շրջանի իրավիճակի մասին զեկուցւում է Վազգէն Սարգսեանին։ Սարգսեանն ասում է, թէ տեղեակ է իրավիճակին եւ յորդորում է սպասել մինչեւ առաւօտ, մինչ օգնութիւն լինի ԼՂՀ-ից։

Մօտ 15 հազար մարդ էր հաւաքուած Կիւլիստանում։ Գիշերը որոշուեց տարհանել նաեւ Վերին Շէնի բնակիչներին։

Սկսուեց նաեւ Կիւլիստանի ռմբակոծութիւնը (4:00-ին)։ Ժամը 8:00-ից սկսուեց ողջ ժողովրդի տարհանումը (էվակուացիա)՝ Հաթերքի ուղղութեամբ։ Ժողովրդի մէջ խուճապ էր։ Վերջում դուրս եկան զինեալ ջոկատները։ Օգնութիւն չեղաւ։ Զրահատեխնիկան՝ Տանկը «Գրադ» կայանքը, զրահատանկային մեքենաները հանուեցին։ Զինամթերքի պահեստները պայթեցուեցին, իսկ մի պահեստ ականապատուեց։ ԼՂՀ պաշտպանութեան նախարարութեան կողմից Շահումեանի ջոկատները զինաթափուեցին։ Շահումեանի շտապը Շահէն Մեղրեանի գլխաւորութեամբ որոշում է պայքարը շարունակել պարտիզանական պատերազմի եղանակով։

Նոյն օրը Երեւանում ժամը 17:00-ին ՀՅԴ հրաւիրած հանրահաւաքին քննարկւում էին ներկայ իշխանութիւնների վարած քաղաքականութեան հետեւանքները։ Թշնամին գրաւել էր արդէն Կիչան, Սրխաւենդ գիւղերը։ ՀՀ նախագահ Լ. Տէր Պետրոսեանը (կամայ թէ ակամայ) հանդէս եկաւ պաշտօնական յայտարարութեամբ, որով դատապարտեց Ատրպէյճանի կատարած գործողութիւնները, համաշխարհային հանրութեան ուշադրութիւնը հրաւիրեց ԼՂՀ-ի վրայ լայնածաւալ յարձակումը կանգնեցնելու եւ նոր մարդկային զոհերից ու աւերածութիւններից խուսափելու համար։

Յունիսի 14-ին «Սու-25» ինքնաթիռից քիմիական նիւթեր պարունակող ռումբեր էին նետում Շահումեանի վրայ, 10-ից աւելի մարդ թունաւորման նշաններով տեղափոխւում է հիւանդանոց։ Քիմիական զէնքի գործադրումից առաւել տուժում են Պուզլուխի բնակիչները (ՀՀ, թիւ 116, 92 թ.)։ Նոյն օրը ատրպէյճանական բանակը շարժւում եւ գրաւում է Շահումեանի շրջանի գրեթէ բոլոր գիւղերը, բացառութեամբ Կիւլիստանի։

«Գրադ» կայանքից հրթիռակոծւում են Մարտակերտի շրջանի Զայլու եւ Թալիշ գիւղերը, որտեղ կենտրոնացուած էին Շահումեանի շրջանի մեծ թուով բնակիչներ։

Մարտական խմբերը մինչեւ վերջին հնարաւորութիւնը դիմադրել են։ Հրամանով նահանջել են բոլորը եւ շրջապատումից դուրս են եկել Մանաշիդում, Էրքէջում։ Մանաշիդում, Պուզլուխը գրաւելուց եւ Էրքէջ մտնելուց, Հայ Պարիսը գրաւելուց յետոյ, տեղի ջոկատը, «Մեծն Տիգրան» ջոկատը եւ այնտեղ գտնուող վերինշէնցիների ջոկատը մնացել են շրջապատման մէջ։ Հրամանով նրանց հանել են այնտեղից։ Ոչ թէ նրանք նահանջել են, այլ դուրս են եկել հրամանով։ Կարաչինարում ջոկատները կռուել են մինչեւ վերջ, մինչեւ որ բնակչութիւնը դուրս է եկել եւ նոր միայն գիշերը, մթութեան մէջ կարողացել են հեռանալ, ի հարկէ կորուստներով։

Աշոտ Պետրոսեան
«Մեծն Ծահէն» գրքից

ՀՈՐԻԶՈՆ | www.horizonweekly.ca

ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

ԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ՄԷՋ

Բ. ՏԱՐԻ, Թիւ 8, Յուլիս 2019

ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

ԱՌԱՋՆՈՐԴԻ ԽՕՍՔ

ՉՎԱԽՆԱԼ...
ԱՆՈՐ ՍԻՐԵԼԻ ՈՐԴԻՆ Է

Քրիստոս Իր տնօրինական կեանքին ընթացքին բազմաթիւ կոյրերու, կաղերու և հիւանդներու բժշկած էր, հինգ հազար մարդոց կերակրելու հրաշքը կատարած էր, որոնք ակնյայտ նշաններն էին Անոր կատարեալ աստուածութեան:

Այս բոլորով հանդերձ, մարդիկ տակաւին չէին կրցած հասկնալ թէ ո՞վ է Ան: Նոյնիսկ աշակերտներուն Իր խօսքը ուղղելով, Յիսուս հարց կու տար, թէ մարդիկ ի՞նչ կը մտածեն Իր մասին, թէ՝ ո՞վ է Ինք: Աշակերտները կը պատասխանեն, թէ ոմանք կը կարծեն «**Յովհաննէս Մկրտիչը**», ոմանք՝ «**Եղիա մարգարէն**», իսկ ուրիշներ՝ «**Երեմիան**», ոմանք ալ՝ «**մարգարէներէն մէկը**»: Ապա, Յիսուս Իր խօսքը Կ'ուղղէ Իր աշակերտներուն՝ ըսելով.- «**Իսկ դուք ի՞նչ կը մտածէք Իմ մասին**»: Պետրոս առաքեալն է, որ կը պատասխանէ.- «**Դուն Քրիստոսն ես, կենդանի Աստուծոյ Որդին**»: Սակայն քիչ յետոյ, նոյն այս աշակերտը և ուրիշ աշակերտներ շփոթի պիտի մատնուէին, կասկածի զգացում պիտի ունենային, երբ Յիսուս անոնց հետ կը խօսէր գալիք օրերու, Իր չարչարանքներուն և փրկագործական խորհուրդին մասին: Անոնք չէին կրցած հասկնալ Անոր առաքելութեան նպատակը, որ ուրիշ բան չէր, եթէ ոչ՝ մեղքի տիղմին մէջ ընկղմած մարդու ազատագրումը և փրկութեան առաջնորդելը:

Ճիշտ այս պատճառով, Յիսուս Իր երեք աշակերտներուն ներկայութեամբ Թափոր լեռան վրայ աղօթելու պահուն **այլակերպուեցաւ**, **պայծառակերպուեցաւ**, իր զգեստները ձիւնի պէս ճերմակ դարձան և լոյսերու մէջ ողողուեցաւ ամբողջութեամբ: Մէկ խօսքով՝ **Իր աստուածային փառքով և տեսքով երևցաւ աշակերտներուն**:

Նոյն պահուն **Մովսէս և Եղիա մարգարէներն** ալ փառահեղ կերպով երևցան և սկսան խօսիլ Իր հետ գալիք օրերու մասին, մահուան, յարութեան և երկինք համբարձման մասին: Միաժամանակ, Աստուած ամպերուն մէջէն հաստատեց Անոր Աստուծոյ Որդին ըլլալու ճշմարտութիւնը՝ ըսելով.- «**Ասիկա է իմ սիրելի Որդիս. Անոր մտի՛կ ըրէք**»:

Աստուծոյ ձայնը լսելով, երեք աշակերտները վախցան. սակայն Յիսուս մօտենալով անոնց ըսաւ.- «**Ոտքի՛ ելէք, մի՛ վախնաք**»:

Ահա այս է պայծառակերպութեան հրաշքը, որ ամէն տարի Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին մեծ շուքով է որ կը տօնախմբէ: Այսօր, որքա՜ն կարիքն ունինք Թափոր լեռան բարձունքնին առանձնանալու և աղօթելու, մանաւանդ՝ պայծառակերպուելու Քրիստոս լոյսով:

Չվախնա՛լ երբեք... քաջ գիտնալով, որ Ան է Աստուծոյ սիրելի Որդին:
Եկէ՛ք միայն ԱՆՈՐ ԼՍԵՆՔ...:

Բաբգէն Արքեպիսկոպոս Չարեան

ՀՈԳԵՒՈՐ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

Յիսուս, Աստուծոյ Որդին, Ի՛նք է Ճանապարհը, Ճշմարտութիւնը և Կեանքը: Իր ուսուցումներն ու քարոզած ճշմարտութիւնները վարկաբեկեցին և բացայայտեցին բոլոր ժամանակներու և Իր ապրած ժամանակաշրջանի կրօնական սխալ հաւատալիքներն ու բարոյական թերի ըմբռնումները: Այս պատճառով ալ անօրէնները զԻնք մահուան դատապարտեցին:

Սէրէն միշտ սէր կը ծնի: Ան փոխանակ դատապարտելու զանոնք, խաչին վրայէն ներեց զԻնք խոցողները և Իր կեանքը Իր Հօրը ձեռքերուն մէջ յանձնեց՝ մեր մեղքերու քաւութեան համար: Սակայն, Կենդանին չէր կրնար մեռելներուն մէջ մնալ և մեր սրտերը միշտ սուգի մէջ պահել, Ան, Իր հրաշալի Աստուածութեամբը, երրորդ օրը մեռելներէն յարութիւն առաւ՝ մեզի պարգևելով մահուան վրայ տանելիք յարութեան յաղթանակի յոյսը:

Ապա, Իր յարութենէն 40 օր ետք, երբ երկինք պիտի համբառնար, Իր աշակերտներուն ըսաւ. «Ահա ես միշտ ձեզի հետ պիտի ըլլամ, մինչև աշխարհիս վախճանը» (Մտթ. 28.20): Խոստացաւ Իր մեկնելէն ետք Սուրբ Հոգին՝ Մխիթարիչը ղրկել, և Հոգւոյ Գալստեան օրը, այդ վախկոտ ու երկչոտ տկար Առաքեալները, Սուրբ Հոգին զգեցած, դարձան Աւետարանի պատգամը տարածող անվախ ու համարձակ ախոյաններ: Այդպիսով, Քրիստոս Ի՛նք հաստատեց Եկեղեցին, որպէսզի անոր միջոցաւ դարերու ընթացքին աստուածային ճշմարիտ պատգամներն ու կանոնները ուսուցանուին բոլոր ժամանակներու մէջ ապրող մարդոց:

Յիսուսի Աւետարանը իւրաքանչիւր քրիստոնեայի կը յուշէ, թէ ի՞նչ առարկայական փոփոխութիւններ պէտք է յանձն առնէ մարդ իր կեանքի ընթացքին: Անիկա հիմնաքարն է՝ ձերբազատելու կրաւորական հաւատքէն և ազատօրէն ընտրելու ներգործական հաւատքը: Ան Քրիստոնեայ հաւատացեալին կը սորվեցնէ նաև աշխարհին և իր նմանին հանդէպ ունեցած իր անտարբերութենէն հրաժարելու և իսկական Քրիստոնէական կենցաղ մը որդեգրելու արուեստը, յանձնառու ըլլալով իրագործել սիրոյ և խաղաղութեան կեանք մը՝ ամէն միջավայրի և ամէն կացութեան մէջ:

Խմբագրական

ՔՐԻՍՏՈՍԻ ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ հինգ Տաղաւար տօներէն երրորդը կը կոչուի Այլակերպութիւն կամ Պայծառակերութիւն, ժողովրդային անուանումով՝ Վարդավառ: Առաջին երեք Աւետարանները, որոնք համատեսական կը կոչուին, մեր Տիրոջ և Փրկիչին Այլակերպութիւնը կը նկարագրեն հետևեալ ձևով.-

Յիսուս իր հետ առնելով առաքեալներէն Պետրոսը, Յակոբոսը և Յովհաննէսը, լեռ կը բարձրանայ աղօթելու: Մինչ կ'աղօթէր, Անոր դէմքը արևու նման կը լուսաւորուի, իսկ զգեստները հրեղեն լոյսի նման սպիտակ կ'ըլլան: Յիսուսի երկու կողմերը կը յայտնուին հին կտակարանի մեծագոյն մարգարէներէն երկուքը. առաջինը՝ Մովսէս, որ կը խորհրդանշէ օրէնքի մարգարէութիւնը, իսկ երկրորդը՝ Եղիան, որ կը խորհրդանշէ հաւատքի մարգարէութիւնը: Զոյգ մարգարէները Քրիստոսի հետ կը խօսին Անոր չարչարանքներուն, խաչելութեան, մահուան և յարութեան մասին:

Պետրոս, այս հրաշալի տեսարանի գեղեցկութենէն զմայլած, Յիսուսի կ'առաջարկէ ըսելով.- «Վարդապե՛տ, լաւ է որ հոս մնանք. երեք վրաններ շինենք մին Քեզի, մէկը Մովսէսին և միւսը Եղիային համար» (ՂԿ. 9:35): Մինչ Պետրոս կը խօսէր, ահա լուսաւոր ամպ մը կը ծածկէ զիրենք. ամպին մէջէն ձայն մը կը լսուի, որ կ'ըսէր.- «Այս է իմ սիրելի Որդիս, որուն ես հաճեցայ, անոր մտիկ ըրէք» (Մտ.17:1-6):

Այլակերպութեան տօնը Քրիստոսի Աստուածային փառքին յայտնութեան յիշատակն է, երբ Ան առաջին անգամ ըլլալով ինքզինք ցոյց տուաւ որպէս Աստուած, Տէր ողջերու և մեռեալներու:

Սուրբ Գրիգոր Նարեկացի Վարդավառ բառը կը մեկնաբանէ հետևեալ ձևով.- «Ինչպէս վարդի մը կոկոնը բացուելով ցոյց կու տայ վարդին ողջ գեղեցկութիւնը և բոյրը, նոյնպէս ալ Քրիստոսի Պայծառակերպութեամբ մեր առջև բացայայտուեցաւ Աստուծոյ Որդիի Աստուածութիւնը և ողջ փառքը»:

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս իր երկրաւոր առաքելութեան ընթացքին առիթներն ու միջոցները կը ծառայեցնէր փրկագործութեան բարի լուրը աւետելու և **«Երկնքի Արքայութեան մարգարիտները»** երկիր փոխադրելու նպատակին: Նոյնպէս և Այլակերպութեան դէպքը՝ Քրիստոսի լուսաւոր և պայծառակերպուած դիմագիծի ընդմէջէն մեր ուշադրութեան կը յանձնէ ու կը յիշեցնէ մարդկութեան վայելչութիւնն ու գեղեցկութիւնը հանդերձեալ կեանքի մէջ:

Այլակերպութիւնը նաև կը խորհրդանշէ մարդկութեան երանելի վիճակը յաւիտենականութեան մէջ, և կը յիշէցնէ Քրիստոսի մարդեղութեան խորհուրդին հիմնական նպատակը, որ կը միտի անկեալ մարդը վերականգնել և անոր վերադարձնել Աստուածային այն շնորհքները, որ նախամարդուն անհնազանդ ընթացքով կորսուած էր:

Քրիստոսի այլակերպութիւնը մարդկային բնութեան նախապատկերացումն է, որ տեղի պիտի ունենայ Քրիստոսի երկրորդ գալուստով՝ երբ փառաւորեալ մարմիններով յարութիւն առնենք:

Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի այլակերպութիւնը տիեզերական վախճանական իմաստ ունի նաև, ազատագրելու ամբողջ մարդկութիւնը, որ ենթակայ է մեղքի և ապականութեան, զորս այլակերպութեան խորհրդով պիտի ազատագրուի ու վերանորոգուի, երբ Քրիստոս «իր փառքով» յայտնուի:

Քրիստոսի այլակերպութիւնը իր խոր տպաւորութիւնն ու ազդու ներգործութիւնը ունեցաւ առաքեալներուն և համայն մարդկութեան վրայ: Պետրոս առաքեալ իր ականատեսի վկայութեամբ կ'ըսէ.- «Անձամբ ականատես եղանք Անոր մեծութեան, երբ Անիկա փառք և պատիւ ստացաւ Հօր Աստուծմէ, որ իր մեծավայելուչ և փառաւոր ձայնով Անոր համար վկայեց, ըսելով-. «Ասիկա է իմ սիրելի Որդիս, որուն ես հաճեցայ» (Բ.Պտ 1:16-17):

Այլակերպուած աշխարհի Լոյսին՝ Քրիստոսին մօտենալով կը լուսաւորուինք և կը դառնանք Լոյսի որդիներ և Աստուծոյ թագաւորութեան ժառանգորդներ:

Տաթև Աւ. Քահանայ Միքայէլեան

ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆ

«... իսկ որ համբերեցէ
ի սպառ՝ նա կեցցէ»
(Մտ 10:22)

Ո՜վ Տէր,
Կեանքս խճողող առօրեայ մանրուքները
Ամբողջութեամբ Քեզի կը յանձնեմ:

Վայրկեանիս Տէրը Դուն ես:
Այդ մանրուքներուն իսկ ընդմէջէն
Ինծի կը ներկայանաս...
Ու կը ժպտիս:
Կը ժպտիս փշրանքներուս...
Ու համբերութիւն կը ներշնչես:

Համբերութիւն՝
Որպէսզի սիրող աչքովդ ինքզինքս տեսնեմ,
Այնպէս ինչպէս Դուն կը տեսնես:

Համբերութիւն՝
Որպէսզի էութիւնս
Ամենապաշտպան գրկիդ յոյսով ողողուի:

Համբերութիւն՝
Որպէսզի ժամանակաւորին
Խաբուսիկ դիմակը պատռի
Ու լուսապայծառ հայեացքդ արեգակնանայ:

Համբերութիւն՝
Որպէսզի, շրջապատիս շարժումին մէջ՝
Լսեմ ու կանչիդ անսամ:

Համբերութիւն՝
Որպէսզի մեղքերս հալեցնող
Հրոյդ խայծը տանիմ:

Համբերութիւն՝
Որպէսզի հետևելով օրինակիդ
Սիրող աչքովդ եղբօրս նայիմ:

Համբերութիւն՝
Որպէսզի հետևելով օրինակիդ
Գուրգուրոտ ձեռքովդ եղբօրս հասնիմ:

Համբերութիւն՝
Որպէսզի հետևելով օրինակիդ
թշնամիս ներեմ:

Համբերութիւն՝
Որպէսզի ըմբռնեմ թէ
Թշնամի՛դ է իսկական թշնամիս՝
Աղբիւրը չարին,
Եւ ոչ՝ մութին մէջ խարխափող եղբայրս:

Համբերութիւն՝
Որպէսզի եկեղեցւոյ պայծառութեան
Մասնակցութիւնս կատարեալ ըլլայ:

Համբերութիւն...
Մինչ փշրուածս կը վերականգնես,
Կ'այլափոխես,
Կը յարուցանես:

Համբերութիւն...:

Կարօ Սրկ. Նոխուտեան

ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ՄԱՏԵԱՆԻՆ ՄԱՍԻՆ ՀՌՉԱԿԱՒՈՐ ՄԱՐԴՈՑ ՄՏԱԾՈՒՄՆԵՐԸ

- «Առանց Աստուածաշունչի անկարելի է մանուկին առողջ կրթութիւն ջամբել»՝ **ԼԵԻ ԹՈԼՍԹՈՅ**:
- «Ս. Գիրքը Աստուծոյ կողմէ մարդոց տրուած լաւագոյն նուէրն է»՝ **ԱԲՐԱՀԱՄ ԼԻՆՔԸԼՆ**:
- «Ս. Գիրքին հանդէպ իմ հաւատքս եղած է իմ բարոյական և գրական կեանքիս առաջնորդը»՝ **ԿԷՕԹԷ**:
- «Ո՛վ երիտասարդ, քեզի կը խրատեմ, որ Ս. Գիրքին մասին զօրաւոր հաւատք ունենաս»՝ **ԲԵՆԻԱՄԻՆ ՖՐԱՆՔԼԻՆ**:
- «Ս. Գիրքը կայ ու պիտի մնայ, իբրև աշխարհի ամենէն մեծ ու ամենէն գեղեցիկ գիրքը»՝ **ՀԱՄԻԼԹԸՆ**:
- «Ս. Գիրքը ամենէն վսեմ փիլիսոփայութիւնն է»՝ **ԻՍԱՀԱԿ ՆԻԻԹՈՆ**:
- «Աւետարանը տարբեր է ուրիշ գիրքերէն, որովհետև անիկա կը կրթէ միտքն ու հոգին: Կաթէն աւելի սննդարար կերակուր մըն է, Գողգոթայի խաչի փեթակին մէջ պատրաստուած մեղրն է՝ իբրև նոր մանանայ մը»՝ **ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ:**
- «Աւետարանը այն գիրքն է, որմէ աւելի բարձր մտաւորական արտադրութիւն մը ցարդ լոյս չէ տեսած աշխարհի վրայ»՝ **ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆ**:

ԴԱՍԵՐ՝ ՃՇՄԱՐԻՏ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԿԵԱՆՔ ԱՊՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

- Իբրև մարդ էակներ, կը դիմագրաւենք ներքին ու արտաքին փորձութիւններ. եթէ անտեսենք Քրիստոսի ապաշխարութեան և փրկութեան հրաւէրը և փորձենք չքմեղանքի տերևներու ետին պահուըտիլ, այդ ժամանակ ինքնախաբէութեան և ինքնարդարացման պատրուակները պատճառ պիտի ըլլան, որ մենք ալ Աստուծմէ հեռանանք և իր շնորհքներէն զրկուինք:
- Հայր Աստուած իր հրեշտակներուն հետ կ'ուրախանայ բոլոր այն մեղաւորներուն համար, որոնք զղջալով կ'ապաշխարեն: Քրիստոս մեզի կ'ուսուցանէ աստուածային ներողամտութեան և անհուն սիրոյն մասին, յիշեցնելով, որ Երկնաւոր Հայրը միշտ պատրաստ է ներելու և վերստին որդեգրելու զղջացող և տուն վերադարձող բոլոր մեղաւորները:
- Մեր Երկնաւոր Հայրը մեզմէ կ'ակնկալէ, որ այնպէս ինչպէս մենք հետամուտ ենք երկրաւոր բարիք, հարստութիւն և երջանկութիւն ապահովելու, նոյնքան և աւելի խոհեմութիւն, ճիգ, հնարք և աշխատանք տանինք հոգևոր շնորհք վաստակելու համար՝ արժանանալով երկնային անսպառ գանձերը տնտեսելու պաշտօնին և արքայութեան մէջ յաւիտենական կեանքը ժառանգելու հնարաւորութեան:

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս կը խոստանայ.-

1. «Ես եմ Կեանքի Հացը: Ան որ ինծի կու գայ՝ բնաւ պիտի չանօթենայ և ան որ ինծի կը հաւատայ՝ երբեք պիտի չծարաւնայ» (Յովհաննէս 6:35):

2. «Ես եմ աշխարհի Լոյսը: Ով որ ինծի կը հետևի՝ խաւարի մէջ պիտի չքալէ, այլ պիտի ունենայ այն լոյսը որ կեանքին կ'առաջնորդէ» (Յովհաննէս 8:12):

3. «Ես եմ Դուռը: Ով որ ինձմէ անցնելով ներս մտնէ՝ պիտի փրկուի» (Յովհաննէս 10:9):

4. «Ես եմ իրաւ Հովիւը: Իրաւ հովիւը իր կեանքը կու տայ ոչխարներուն համար» (Յովհաննէս 10:11):

5. «Ես եմ Յարութիւնը և Կեանքը: Ան որ ինծի կը հաւատայ, թէպէտև մեռնի՝ պիտի ապրի» (Յովհաննէս 11:25):

6. «Ես եմ Ճամբան, Ճշմարտութիւնը և Կեանքը: Միայն ինձմով կարելի է Հօրս երթալ» (Յովհաննէս 14:6):

7. «Ես եմ Ճշմարիտ Որթատունկը» (Յովհաննէս 15:1):

8. «Ես եմ Ալֆան և Օմեկան, Այբը և Ֆէն, Առաջինը և Վերջինը, Սկիզբն ու Վախճանը» (Յայտնութիւն Յովհաննու 1:8, 17, 21:6, 22:13):

9. «Ես եմ Կենդանի եղողը և Ես եմ որ մեռայ և ահաւասիկ կենդանի եմ յաւիտեանս յաւիտենից» (Յայտնութիւն Յովհաննու 2:18):

10. «Ես եմ որ կը ճանչնամ մարդոց ցանկութիւններն ու մտածումները, և իւրաքանչիւրին կը հատուցանեմ իր գործերուն համաձայն» (Յայտնութիւն Յովհաննու 2:23):

ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

ՏԱԹԵՒԱՑԻՆ ԽԱՉԵԼՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Հայ Եկեղեցւոյ Աստուածաբան մեծ հայրերէն՝ Ս. Գրիգոր Տաթևացին, հետևեալ բացատրութիւնը կու տայ խաչելութեան մասին.

• Խաչին վրայ Յիսուսի գլուխ խոնարհեցնելը կը խորհրդանշէ Աստուած և մարդ հաշտութիւնը:

• Ձեռքերուն աջ ու ձախ տարածելը՝ Յիսուսի ունեցած անսահման սէրը մարդոց նկատմամբ:

• Կողէն խոցուիլը՝ մեր փրկութեան համար Յիսուսի սուղ գին վճառելը:

• Վիրաւոր կողէն ջուրի և արեան բխումը՝ մարդկութեան մաքրուիլն ու սրբուիլը՝ Յիսուսի կենարար ու սուրբ արիւնով:

• Մարմնին մերկացումը մեզի կը թելադրէ՝ բաց սրտով ու անկեղծ խոստովանութեամբ կանգնիլ Աստուծոյ դիմաց:

• Գլխուն դրուած փշէ պսակը՝ փառաւորումը Հօր Աստուծոյ թագաւորութեան մէջ:

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ

Յիսուս առակ մը պատմեց, թէ ի՛նչպէս հովիւ մը իր ոչխարներէն մէկը կորսնցուց:

Օգնէ՛ հովիւին գտնելու կորսուած ոչխարը:

Այս առակը կրնաս կարդալ Ղուկաս (15. 4-7) համարներուն մէջ:



A.C.C. TORONTO

SUMMERFEST 2019

JULY 12 | 13 | 14

ՀԱՅ ԿԵԴՐՈՆԻ ԱՄԱՌՆԱՅԻՆ ՓԱՌԱՏՕՆ

Market Vendors
Raffle Prizes
Dance Performances
Carnival
Arcade Games
Petting Zoo
& More

FRIDAY | $25
7:30pm - 2:00am

SATURDAY | $30
5:00pm - 2:00am
$25 EARLY BIRD 5:00pm - 7:00pm

SUNDAY | $25
2:30pm - 12:00am
$20 EARLY BIRD 2:30pm - 5:30pm

ARMENCHIK
FRIDAY . JULY 12
ՈՒՐԲԱԹ 12 ՅՈՒԼԻՍ

KOKO ASAYAN
FRIDAY . JULY 12
ՈՒՐԲԱԹ 12 ՅՈՒԼԻՍ

ARAME
SATURDAY . JULY 13
ՇԱԲԱԹ 13 ՅՈՒԼԻՍ

ARARAD AHARONIAN
SATURDAY . JULY 13
ՇԱԲԱԹ 13 ՅՈՒԼԻՍ

SIRUSHO
SUNDAY . JULY 14
ԿԻՐԱԿԻ 14 ՅՈՒԼԻՍ

KEVORK ARTINIAN
SUNDAY . JULY 14
ԿԻՐԱԿԻ 14 ՅՈՒԼԻՍ

L'ORO
PLATINUM SPONSOR

Laraj
MAJOR PLATINUM FOOD SPONSOR

ARZ fine foods
PLATINUM SPONSOR

#accsummerfest2019

COMFORTABLE.STYLISH. FUEL-EFFICIENT.
CHECK, CHECK AND CHECK.

The all-new 2019 RAV4
FWD LE
From *$88.00 +Tx /week
60-month lease
260 payments
MSRP starting from $30,304

The all-new 2020 COROLLA
L CVT
From *$67.00 +Tx /week
60-month lease
260 payments
MSRP starting from $22,934

Conditions may apply. **Total Annual Km: 20,000 km.** *Prices and weekly payments are estimates only. Actual amounts may vary. The displayed price includes Freight & PDI of $1,815 towards the 2019 Toyota RAV4 FWD LE and the displayed price includes Freight & PDI of $1,645 towards the 2020 Toyota COROLLA L CVT, Air Conditioning Charge of $100 if applicable and Dealer Fees of up to $399. For full and accurate vehicle availability and a detailed quote, please contact Toyota Gabriel St-Laurent dealer.

TOYOTA

Դիմեցէք Սամ Քարատանայանին
լաւագոյն սպասարկութեան համար

Sam Karadanaian
Product Consultant
Tel: 514 748-7777 Ext.: 3810
skaradanaian@toyotagabriel.com

TOYOTA GABRIEL ST-LAURENT

3333, ch. de la Côte-de-Liesse
Saint-Laurent, Québec, H4N 3C2
514 748-7777
toyotagabrielstlaurent.com
OPEN SATURDAYS

Pharmacie Levon Benohanian et Mher Koubelian Inc.
Pharmaciens-propriétaires

3915, Boulevard Samson
Laval, QC H7W 2G1

Proxim

T 450 688-4111
F 450 681-5525
proximlaval@gmail.com

Lun. au vend. : 8h30 à 21h
Sam. et dim. : 9h à 17h

Infirmière (jeudi) : 8h30 à 15h

Անվճար սպասարկություն մինչեւ ձեր տունը.
Շաբաթական դեղատուփիկի պատրաստություն.
Ազատ փոխադրում ձեր դեղացանկի (dossier) այլ դեղարան. Հղերու պատուաստում (vaccination) հիւանդապահի կողմէ.

Բուժական հետեւում՝
արեան բարակութեան (INR), շնչերակային ճնշման (tension artérielle), արեան շաքարի (glycémie capillaire), արեան մաղձաճարպի (cholesterol), եւն.

Canadian Friends, you're invited to the

CHICAGO
AYF-YOARF OLYMPICS 2019

2019 AYF-YOARF Sr. Olympics in Chicago

MEET US IN THE MIDDLE!

Epic entertainment:
Thurs: Comedian Vahe Berberian | Fri: Hye Vibes and Tigran Asatryan
Sat: Harout Pamboukjian | Sun: Onnik Dinkjian & AYF All Stars

Thursday, August 29–Monday, September 2
Hyatt Regency O'Hare
9300 W. Bryn Mawr Ave., Rosemont, IL 60018

ՀՈՐԻԶՈՆ 40

ՀԱՄԵՐԳՈՒԹ

Հովանաւորութեամբ՝
ՀՅԴ Գանատայի Կեդրոնական Կոմիտէին

Կազմակերպութեամբ՝
«Հորիզոն»ի 40-ամեակի յանձնախումբին

Շաբաթ, 14 Սեպտեմբեր 2019-ին,
երեկոյեան ժամը 7:00-ին

Մոնթրէալի Հայ կեդրոնի
«Ա. Ահարոնեան» սրահին մէջ
3401 Olivar Asselin, Montréal, Qc

Գեղարուեստական յայտագիր
Մուտքի նուէր՝ $60.00

Տոմսերը ապահովելու համար
հեռաձայնել «Հորիզոն»ի գրասենեակ
514 332-3757 թիւին

ARMENIAN HERITAGE CRUISE™ 2020

JOIN US FOR

- VIP Speakers
- Armenian Festival at Sea
- Armenian Boardwalk Street Party



7 night
Western Caribbean Cruise
JANUARY 12-19, 2020

Departing from Miami
- Labadee
- Jamaica
- Cozumel

Prices start at:

INSIDE CABIN	$1,069
CENTRAL PARK VIEW	$1,169
OCEAN VIEW	$1,279
CENTRAL PARK BALCONY	$1,399
BOARDWALK BALCONY	$1,399
OCEAN VIEW BALCONY	$1,539
JUNIOR SUITES	$2,329
GRAND SUITES	$3,419

Rates are per person for double occupancy cabins.

Limited additional luxury suites are available upon request. For pricing on these and other accommodations, contact TravelGroup. Prices include Cruise, Port Charges and all ATC private-sector taxes. Government fees of $27.67 are per person for Inside Room. Brochure information is subject to change. Always check website for most current rates.

TRAVELGROUP

Local 561-447-0750 Ext 108 or 102
Toll Free 1-866-447-0750

Medical Professionals are invited to register for our "Challenges in Global Health" program offering 15.0 ACCME , CPE and CDE credits.

Association Age D'or
du Centre Communautaire Arménien Inc.
Հայ Կեդրոնի Տարեցներու Միութիւն
3401 Olivar Asselin, Montréal, Qc H4J 1L5

Հայ Կեդրոնի Տարեցներու Միութիւնը
կազմակերպած է
Պտոյտ դէպի Հոլկուին Քիւպա

Trip to Holguin, Cuba
Playa Pesquero

All inclusive, Բոլոր ծախսերը ներառեալ
December 2 -December 9, 2019
$1169.00 / pers.(dbl occ.) $1349.00 /pers.(single occ.)

For reservations required $200.00 deposit by July 13,2019
(non refundable)
and a valid passport.

For more information call,
Annie Kouyoumdjian 514-804-8824
Maro Gostanian 514-887-8491

UN MOT DE VOTRE
conseiller

Երկու խօսք՝
քաղաքապետարանի
անդամին կողմէ

Յարգելի՝ քաղաքացիներ

Ես Ռենօ շրջանի քաղաքապետարանի անդամ Արամ Էլակէօզն եմ եւ Լաւալէն ընտրուած միակ հայը: Օգտուելով ինծի տրամադրուած այս սիւնակէն, կուզեմ դիմել մեր համայնքի անդամներուն՝ մեր լեզուով: Ամառ է (վերջապէս) եւ վերջին շաբաթներուն տեղի ունեցան բանի մը տօնակատարութիւններ: Անցեալ մը եւս կը կազմակերպուի Հայկական Փառատօնը, որ մեր մշակոյթին նուիրուած ամենամեծ միջոցառումներէն մէկն է, որուն մեծ թիւով մարդիկ ներկայ կըլլան Լաւալէն եւ այլ վայրերէ: Մնծապէս կուզուիմ, ինծի մեր գլուխութեան եւ մշակոյթին անծանօթ մարդոց ներկայ գտնուիլն ու այդ Փառատօնին միջոցաւ հետաքրքրութեամբ ծանօթանալը մեր աւանդութիւններուն: Խորին շնորհակալութիւն Հայ Դատի յանձնախումբին, որ այս տարի եւս կը կազմակերպէ, այդ ընդունելութիւնը՝ Լաւալի Մուրը Գէորգ եկեղեցւոյ փառատօնին: Մեծ հաճոյք պիտի ըլլայ ինծի համար ներկայ գտնուիլը եւ համայնքին հետ տեսակցիլը այս եւ յառաջիկայ փառատօներուն ընթացքին, ուրեմն՝ ի տեսութիւն:

Յաջողութիւն կը մաղթեմ նաեւ Քեպէքի եւ Գանատայի Ազգային տօներուն առթիւ կազմակերպուած տօնակատարութիւններուն, որոնք սեղի պիտի ունենան Centre de la nature-ի մէջ: Ես չափազանց հպարտ եմ, որ քաղաքս կարեւոր դերակատարութիւն կունենայ նշեալ գեղեցիկ եւ տարուէ տարի առաւել եւս յաջողակ տօնակատարութիւններուն կազմակերպման մէջ:

Կը յայտնեմ նաեւ լրիւ պատրաստակամութիւնս ձեզի օգտակար դառնալու: Գտայի տուեալներս են՝ a.elagoz@laval.ca է-նամակի հասցէն եւ 514-963-7464 հեռախօսահամարը:

Ցտեսութիւն:

ԱՅՍ ԱՆԿԻՒՆԷՆ

Բանանցի դէմ յանդիման

Բանանցը գիւղ մըն է Ազրպէյճանի Հանրապետութեան Դաշքեսան շրջանին մէջ, Բանանց կամ Արութիւն (կամ Արթինաջուր կամ Կոշկար՝ ըստ Վիքիպեդիայի) գետակի ձախ ափին, երկու բլրակներու վրայ՝ երեք կողմէն շրջապատուած լեռներով։ Այսպէս կը բնորոշէ Հայաստանի եւ յարակից շրջաններու տեղանուններու բառարանը այս պատմական հայաբնակ գիւղը, որ Արցախի Գարդման գաւառին մաս կը կազմէր, հիմնադրուած՝ Գանձակի հետ միասին, եւ հարուստ էր քարի ու երկաթի հանքերով եւ երկաթաձուլարաններով, այդ պատճառաւ ալ կոչուած է նաեւ Բանանոց (այսինքն աշխատելու վայր)։ Այժմ կը կոչուի Բայան։ Գերեզմանատան մէջ ԺԲ. դարէն խաչքար կար։ Միւս կողմէ բաւական լայն տեղ յատկացուած է այս գիւղին Վիքիպեդիա առցանց հանրագիտարանին մէջ, որմէ կը տեղեկանանք, թէ 1989 յուլիս 27-ին, ահա ուղիղ 30 տարի առաջ, գիւղի վերջին բնակիչները ենթարկուեցան բռնագաղթի։

Երբ ցուցասրահէ մը ներս մտնես եւ առաջին արագ հայեացք մը սկսիս նետել շուրջդ, եւ, կամքէդ անկախ, աչքերդ գամուին կեդրոնական կտաւներէն մէկուն վրայ, վստահ կրնաս ըլլալ, որ պատահականութեան արդիւնք չէ այդ, եւ զօրաւոր պատճառ մը կամ պատճառներ ըլլալու են, այդ կլանումիդ, առինքնումիդ ետեւ։ Իսկ երբ կողակիցդ ալ նոյն տպաւորութիւնը ունեցած է՝ առանց հետդ խօսած ըլլալու, կասկած չի մնար։

Այդ կտաւը Բանանց գիւղի համայնապատկերն էր։ Բայց ի՞նչ էր մեզ այդպէս կլանող-առինքնողը։ Հեռաւոր լեռներու աղօտ խորանկարին վրայ՝ ներդաշնակ ձեւերով ու գոյներով երկթեք տանիքներու համադրութի՞ւնը, հայրենի լուսաթաթախ բնութեան գեղեցկութի՞ւնը, գրեթէ վերացական արուեստի վերածուած այնքան իրապաշտ մատուցո՞ւմը հայ գիւղին, թէ ոչ այն լռութի՞ւնը որ կը ճառագայթէր ծաղկած բնութեան իսկ մէջ անմարդաբնակ բնակավայրի այդ պատկերէն, որ քեզ կը տխրեցնէր, միաժամանակ կը հմայէր։

Հակառակ անոր, որ ինծի անծանօթ անուն մը չէր Բանանցը, այսուհանդերձ ստիպուած էի քիչ մը պրպտել՝ յիշողութիւնս թարմացնելու համար։ Այդ պրպտումէն ետք աւելի հասկնալի դարձաւ արուեստագէտին մօտեցումը, որովհետեւ միայն տխրութիւն մը չէ, որ կը բխի այդ կտաւէն։ Ո՛չ, աննպատակ չի կրնար եղած ըլլալ կարմիր գոյնի այդպէս ուժեղ ներկայութիւնը հաւանաբար ժանգոտած թիթեղէ այդ տանիքներուն վրայ։ Արեան գոյն կայ այնտեղ, Եղեռնի՛ գոյն։ Իսկ հեռուն, կապոյտներուն մէջ կորսուող լեռները կարծես կանչ մը կը հանդիսանան, սեփական բնակիչները՝ գիւղին իրաւատէրերը ետ կանչելու կամք մը, զիրենք ետ՝ իրենց պապենական հողերուն վրայ տեսնելու տենչ մը, պահա՛նջք մը։

Վստահ եղէք, պարզ գեղանկար մը չէ այս՝ տանդ պատերը զարդարելու, հայրենի շունչ մը բերելու համար, այլ պահանջատիրակա՛ն գործ մըն է՝ մեզ տեւաբար յիշեցնելու համար մեր պարտքը՝ պայքարելու մեր ուխտը, մեր Դա՛տը։

Արդարեւ յանձնառու արուեստագէտ մըն է Մերուժան Խաչատրեան, որուն ցուցահանդէսը, առաջինը՝ Մոնթրէալի Հայ կեդրոնին կից Արմէն Կարօ եւ Շաքէ Կէօնճեան կեդրոնի նորոգուած ցուցասրահին մէջ՝ կազմակերպուած էր «Համազգային»-ի Սանահին մասնաճիւղին կողմէ՝ անցնող 24-26 մայիսին։ Այո՛, յանձնառու հայորդի մը՝ ծնած Երեւան 1980-ին, վկայուած Թերլեմեզեանի անուան գեղարուեստի ուսումնարանէն, ծառայած հայոց բանակին մէջ։ Եւ առաջին անգամը չէ, որ իր գործերը ըմբոշխնելու առիթը կ՚ընծայուի մեզի։ Արդարեւ 2013-ին ալ նոյն տեղը ան ունեցած է իր ցուցահանդէսը, նոյնպէս առաջինը՝ երբ այդ սրահը նոր կը բացուէր։ Ներկայ ցուցահանդէսը նուիրուած էր Հայաստանի Հանրապետութեան 100-ամեակին ու նախ կայացած էր Երեւանի մէջ անցեալ տարի։

«Բանանցի համայնապատկեր»-ը Մերուժան պիտի չկարենար ստեղծագործել եթէ ուրիշ յանձնառու հայորդի մը՝ Սամուէլ Կարապետեան, որպէս ժառանգորդը Արմէն Հախնազարեանի, ատենին, նախ քան Խորհրդային Միութեան անկումը եւ Ազրպէյճանի հայահալած քաղաքականութեան սաստկացումը, յաջողած չըլլար «փրկել» մեր պատմական վայրերն ու յուշարձանները՝ լուսանկարելով ու չափագրելով ինչ որ կրնար, ինչպէս Արմէն յաջողած էր Արեւմտեան Հայաստանի տարածքին՝ իբր գերմանացի ճարտարապետ կատարելով իր բազմաթիւ գիտարշաւները։ Մերուժան կրցած էր օգտուիլ Սամուէլի լուսանկարչական արխիւէն։

Դիտելով իր միւս գործերը, չենք կրնար չանդրադառնալ, թէ ինչպէս արուեստագէտը կը տիրապետէ իր վրձինի հարուածներուն, գիտէ լաւապէս օգտագործել լոյսի խաղերը, ճաշակով յարաղրել գոյները։ Աւելի ուշագրաւ է նաեւ առօրեայ տեսարաններով ու կերպարներով խորհրդանշաններ ստեղծելու իր հմտութիւնը։ Կարելի է տակաւին անդրադառնալ ծաղիկներ, պտուղներ ու հայրենի յուշարձաններ, բնանկարներ ու մանաւանդ հերոսական դէմքեր (ինչպէս Աւետիս Ահարոնեան, Ռուբէն Տէր Մինասեան կամ Արամ Մանուկեան) պատկերացնող իր գործերուն, սակայն այստեղ կ՚ուզեմ երկու խօսք ընել միայն մէկ այլ կտաւի ալ մասին, որ անուանուած էր «Հին ու նոր Երեւան»։ Այնտեղ նոր Երեւանի դիմազուրկ ապակէ աշտարակներուն խորանկարին առջեւ արուեստագէտը ցոյց կու տար սեփական դիմագիծ եւ ինքնութիւն ունեցող հին բնակարաններ, որոնք աւերակի վերածուելու ընթացքի մէջ են։ Այս ալ գիտակից քաղաքացի Մերուժանի ճիչն է՝ փրկելու համար արդէն հետզհետէ անհետացող հին Երեւանը՝ մեր պատմական ժառանգութիւնը, որ կը քանդուի մեր անտարբեր աչքերուն առջեւ, մեր իսկ ձեռքերով։

Դեռ երկար ճամբայ կայ Մերուժանին առջեւ, եւ նորանոր իրագործումներ մաղթենք իրեն։

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ

RITA BAGHDASSARIAN
Conseillère en Sécurité Financière
Revenu Garantie Viager
COMPTE D'ÉPARGNE LIBRE D'IMPÔT (CELI) • CRÉATION D'HÉRITAGE • REER_FERR RENTE RETRAITE • PLAN D'ÉDUCATION-REÉÉ • ASSURANCE-VIE & HYPOTHÉCAIRE • ASSURANCE SALAIRE & COLLECTIVE • ASSURANCE DE PARTENARIAT
3820, boul. Lévesque Ouest, Bureau 101,
Laval Qc. H7V 1E8
Tél.: (450) 973-2822 • (514) 884-1117 • Fax: (450) 973-2262
ritabagh@yahoo.com

VIZUALIS
optométriste
DR SHANT DONABEDIAN
Centre d'Achat Fairview · Fairview Mall
Pointe Claire
514 695 2555 · VIZUALIS.CA

Danièle Papazian, MSc.
Courtier immobilier
C 514.234.6799
dpapazian@remax-quebec.com
www.remaxducartier.com
RE/MAX DU CARTIER
Agence immobilière
1290, rue Bernard Ouest, bureau 100
Outremont Qc H2V 1V9
T 514.271.2131

Assura Bien inc.
Cabinet en assurance de dommages et de services financiers
Ապահովագրական գրասենեակ
KRIKOR ABRAKIAN VAHAN MATOSSIAN
970 Montée de Liesse, suite 306, Saint-Laurent, Qc, H4T 1W7
T: 514.903.3999

BOURQUE KABABEJIAN NOTAIRES
NOTAIRES ET CONSEILLERS JURIDIQUES
Un rendez-vous avec le savoir-faire
GEORGE KABABEJIAN, LL.B., J.D., D.D.N.
NOTAIRE ET CONSEILLER JURIDIQUE
465, RUE SAINT-JEAN
BUREAU 801
MONTRÉAL, QUÉBEC H2Y 2R6
TÉLÉPHONE : 514 842-4181, POSTE 248
FAX : 514 842-6808
/BKNOTAIRES

PPG
1988
30 ans d'excellence!
CARROSSERIE
JACOB & JACOB
BODY SHOP
CAS D'ASSURANCES
6280 St. Jacques, Montréal, Québec, H4B 1T6
Tél: (514) 484 - 7945 Fax: (514) 484 - 2487
jacobautobody@bellnet.ca www.carrosseriejacobetjacob.ca

RE/MAX
RE/MAX 3000 inc.
Agence immobilière
Elie Berberian
Courtier immobilier | Real Estate Broker
C 514.519.3543
B 514.333.3000

KORONA
JOAILLIERS · 1964 · JEWELLERS
Daniel Torosian
3933 St Martin O. Coin Curé-Labelle Laval, Qc.
514-274-5555 | 450-688-5515 | korona.ca

KRIKOR MAROUNIAN RLU
Independent Financial Security Broker
Life Insurance • Disability & Critical Illness Insurance
Group Insurance • Pension Plans
Travel/Visitor Medical Insurance
11820 General Giraud
Montreal, QC H4J 2H6
Res: (514) 332-7021
Fax: (514) 332-7376
Cell: (514) 927-2666
krikormar@gmail.com

FIVE STAR
ELECTRIQUE
CINQ ÉTOILES
SPECIALIST IN DECORATIVE GARDEN LIGHTING
RESIDENTIAL-COMMERCIAL
BEDROS NALPATIAN
442, LA RIVIÈRE, LAVAL, QC.
TEL: 514 - 497- 5155 FAX: 450 - 689- 3997
E-MAIL: ELECTRIC.FIVESTAR@GMAIL.COM


SOSIE DERNERSESSIAN
MORTGAGE AGENT
LICENCE #M12001830
716 Gordon Baker Road,
Unit 204A, Toronto
Ontario M2H 3B4
CENTUM
Metrocapp Wealth Solutions Inc.
License # 12147
Mortgage programs for new comers to Canada
New purchases
Refinancing
Second mortgages
Self employed
Low credit score
Access to top lenders including private lenders
416.662.6650 cell
centum.ca/sosie_dernersesian

Pharmacie
Levon Benohanian et
Mher Koubelian Inc.
Pharmaciens-propriétaires
3915, Boulevard Samson
Laval, QC H7W 2G1
T 450 688-4111
F 450 681-5525
Lun. au vend. : 8h30 à 21h
Sam. et dim. : 9h à 17h
Infirmière (jeudi) : 8h30 à 15h
LIVRAISON GRATUITE
membre affilié à Proxim

«Հորիզոն»ի 2019 թուականի ուսանողական վարժողական ծրագրի գործակատարն է Յովիկ Կէտիկեան

Գանատայի աշխատանքի եւ ընկերային զարգացման պետական գրասենեակին կողմէ տրամադրուած յատուկ ֆոնտով, «Հորիզոն» շաբաթաթերթը չորրորդ տարին ըլլալով կը նախաձեռնէ ուսանողական վարժողական ծրագիր (Internship Program)։

«Հորիզոն»ի խմբագրութեան ուղուած 16 *Ապրիլ* 2019 *թուակիր նամակով մը, Գանատայի ժառանգութեան նախարար Մելանի Ժոլի կը յայտնէր, թէ նախարարութիւնը գնահատելով «Հորիզոն» շաբաթաթերթի համագանատական ընոյթի տեղեկատուական եւ լրագրական տասնամեակներու աւանդը, վերստին կը հովանաւորէ ամառնային ուսանողական վարժողական ծրագիրը* (Internship program)։

2019 *թուականի ուսանողական վարժողական ծրագրին համար դիմում կատարած թեկնածուներէն մոնթրէալահայ ուսանող Յովիկ Կէտիկեան ընտրուեցաւ ծրագրի գործակատար։*

Ծրագրի գործակատարը «Հորիզոն»ի ամէնօրեայ խմբագրական աշխատանքներու ծիրէն ներս պիտի կատարէ թարգմանութիւններ, գաղութային ձեռնարկներու թղթակցութիւններ եւ հարցախոյզներ, ինչպէս նաեւ թերթի վարչական բաժանմունքին մէջ պիտի դասաւորէ «Հորիզոն»ի 40-*ամեայ արխիւները։*

Յովիկը նախակրթարանի իր ուսումը ստացած է Հալէպի Ազգ. Սահակեան վարժարանէն, միջնակարգը՝ Լիբանանի Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան Ազգ. Գոլէճէն, իսկ երկրորդականը՝ Մոնթրէալի Ս. Յակոբ Ազգային վարժարանէն։ Անդամ է ՀՅԴ Գանատայի Երիտասարդական Միութեան եւ ներկայիս կը յաճախէ Մոնթրէալի Մոմորանսի Գոլէճը։

Նշենք, որ 2016-*ին,* 2017-*ին եւ* 2018-*ին Գանատայի Ժառանգութեան նախարարութեան կողմէ հովանաւորուած «Հորիզոն»ի վարժողական ծրագրի գործակատարները եղած են Ս. Յակոբ Ազգային վարժարանի շրջանաւարտներ Արին Տիմիթեանը, Կորիւն Գոյունեանը եւ Վազգէն Գարագաշեանը, որոնք* 6 *շաբաթներու վրայ երկարող ծրագրի ընթացքին աշխատեցան «Հորիզոն»ի խմբագրական եւ վարչական բաժանմունքներուն մէջ։*

Դասախօսութիւն
«Թուրքիոյ հայ համայնքը այսօր»

Կը դասախօսէ
Դոկտ. Հրաչ Չիլինկիրեան
Օքսֆորտ Համալսարանի Արեւելագիտութեան Ամպիոնի դասախօս

Կազմակերպութեամբ
Քեպէգի Հայ Համայնքի Միացեալ Մարմին

Տեղի կ՚ունենայ Հինգշաբթի, 4 Յուլիս 2019-ին
Երեկոյեան ժամը 7:30-ին
Պոլսահայ Միութեան Կեդրոնէն ներս
2855 Rue Victor Doré, Montréal, QC H3M 1T1

Թուրքիոյ Հանրապետութեան ստեղծումէն (1923) մինչեւ այսօր հայ համայնքը, ինչպէս ընդհանրապէս քրիստոնեայ փոքրամասնութիւնները, թիրախ եղած են պետական եւ հասարակական խտրականութեան: Դասախօսութիւնը պիտի ներկայացնէ Թուրքիոյ հայ համայնքին ծառացած հիմնական խնդիրները, ինչպէս նաեւ զալիք մարտահրաւէրները:

Դոկտ. Հրաչ Չիլինկիրեան մասնագիտութեամբ ընկերաբան (sociologist) է: 2012 թուականէն ի վեր Օքսֆորտ Համալսարանի Արեւելագիտութեան Ամպիոնի դասախօս գիտաշխատող է: Աւարտած է Լոնտոնի Տնտեսաբանական եւ Քաղաքական Գիտութեանց Համալսարանը (LSE), ապա տասը տարի Գեմպրիճի Համալսարանի «Եւրասիա կեդրոն»ի ուսումնասիրութեանց վարիչը եղած է:

Հիւրասիրութիւն ձեռնարկի աւարտին
Մուտքը ազատ

Լաւալի քաղաքապետ Տեմերս, դաշնակցային երեսփոխաններ եւ այլ պաշտօնական հիւրեր այցելեցին Լաւալի Սուրբ Գէորգ եկեղեցւոյ քերմէսը

Շաբաթ, 22 *Յունիս* 2019-*ին, երեկոյեան ժամը* 6:30-*էն սկսեալ, Լաւալի Սուրբ Գէորգ եկեղեցւոյ տօնավաճառ-քերմէս այցելեցին դաշնակցային, նահանգային եւ քաղաքապետական մակարդակի զանազան պաշտօնատարներ։ Պաշտօնական այս հիւրերու շարքին էին Լաւալի քաղաքապետ Մարք Տեմերս, դաշնակցային երեսփոխաններ Ֆայսալ Էլ-Խուրի* (Laval-les-Iles), *Եւա Նասիֆ* (Vimy) *եւ Իվ Ռոպիյար* (Marc-AurՌle-Fortin), *նահանգային երեսփոխան Կի Ուելէթ* (Chomedey), *նահանգային երեսփոխան Մոնիք Սովէի ներկայացուցիչ Ռարէս Պուրլաքու* (Fabre), *Լաւալի քաղաքապետական խորհուրդի անդամներ Արամ Էլակէօզ* (Renaud), *Ալին Տիպ* (St-Martin), *Ժոսլին Ֆրէտէրիք Կոթիէ* (Auteuil), *Սանտրա Էլ-Հըլու* (Souvenir-Labelle), *Նիգոլաս Պորն* (Laval-les Iles), *Վիրժինի Տիւֆուր* (Sainte-Rose) *եւ Ուրուկուէյի ընդհանուր հիւպատոս հայազգի Փեդրո Էտուարտօ Քէօրօղլեան։*

Հիւրերը դիմաւորեցին Լաւալի Սուրբ Գէորգ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տէր Յակոբ Քհն. Կեատայեան, Հոգաբարձութեան ատենապետ Հերմինէ Մանուկեան, ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Վաչէ Շամլեան եւ անդամ Մհեր Գարագաշեան, Լաւալի Հայ Դատի յանձնախումբի ատենապետ Յովիկ Թիւֆէնքճեան եւ Լաւալի «Սարգիս Զէյթլեան» կոմիտէութեան անդամներ Ներսեհ Լիպարեան, Մովսէս Կէտիկեան եւ Զաւէն Տէր Սահակեան։

Բարի գալուստի խօսքով հանդէս եկաւ Յովիկ Թիւֆէնքճեան, որ ողջունեց ներկաները եւ բարձր գնահատեց ներկայ պաշտօնատարներուն քաջալերանքը հայկական նախաձեռնութիւններուն, որմէ ետք քաղաքապետ Տեմերս խօսք առնելով շեշտեց լաւալահայութեան ներդրումը Լաւալի բարգաւաճումին եւ յառաջդիմութեան գործընթացին մէջ։

Ընթացքին հիւրերը այցելեցին տաղաւարները, եւ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն։

Յովիկ Կէտիկեան

ԷԼԻ... Սկիզբը էջ 3

տաքրքրուի անոնցմով եւ իրեն հաճելի թուին։ Այս բոլորը, սակայն, մեծածախս ծրագիրներ են, կրնամ ըսել նաեւ մսխում են, օտարներ միլիոնաւոր տոլարներ կը ծախսեն նման տեսահոլովակներու վրայ երբեմն, հետեւաբար մենք եւս պէտք է քայլ պահենք նորարարութիւններուն հետ, այլապէս համաշխարհայինը կը կլանէ մեր երիտասարդները...

Ես առ այսօր հրապարակած եմ «Արեւ, արեւ», «Դու ես» եւ «Հոփփա» երգերուս տեսահոլովակները, եւ մեծ ուրախութեամբ կ՚ուզեմ անդրադառնալ, թէ քանի մը ամիս առաջ Տիթրոյթի մէջ ելոյթներէս մէկուն ընթացքին, երբ 300 *հոգի հաւաքուած էր սրահին մէջ, եւ ես «Դու ես»ը սկսայ երգել, ժողովուրդը գրեթէ իր բոլոր խաւերով,* 16 *տարեկանէն մինչեւ միջին տարիքի ունկնդիրները, բառ առ բառ հետս երգեցին։ Այս մէկը ինծի համար մեծ իրագործում է, որ կը նշանակէ, թէ երգս հասած է ժողովուրդին, յատկապէս՝ հայ երիտասարդին, եւ կը փաստէ այն իրողութիւնը, թէ եթէ այդ երգը տեսահոլովակով չհրապարակէի, դժուար թէ հասնէր ժողովուրդին ընդհանրապէս, եւ հայ երիտասարդին՝ մասնաւորապէս։*

Հ.- Այո՛, հրապարակի վրայ լայն տարածում եւ մեծ ընդունելութիւն գտած է ձեր «Դու ես» երգին տեսահոլովակը, իսկ նոր երգեր հրապարակելու ծրագիրներ ունի՞ք մօտ ապագային։

Է.Պ.- Միշտ կան նոր ծրագիրներ. առաջինը՝ անցնող օրերուն արդէն հրապարակեցի, որ Յովհաննէս Շիրազի «Ինձ կը մոռանամ»ն է՝ նուիրուած Հայոց Ցեղասպանութեան, երաժշտութիւնը մշակած է Մաժակ Թոշիկեան։ Զափազանց խանդավառ եմ Շիրազի «Ինձ կը մոռանամ»ի բառերով, որ մեր ժողովուրդին արդար պոռթկումին հարազատ թարգմանն է։ Այս մէկը պիտի հնչէ Նիւ Եորքի Թայմ հրապարակէն, ուր պիտի մեկնաբանեմ Շարլ Ազնաւուրի «Ils sont tombés»*ն եւ գուսան Հայկազունի «Հայեր միացէք»ը։ Ասոնցմէ զատ ունիմ երկու ճոխ երգեր, ինչպէս նաեւ «Դու իմ միակ» սիրային երգը, որուն հրապարակումը Դեկտեմբերին նախատեսուած է։*

Հարցազրոյցը վարեց
Սոնա Թիթիզեան Կէտիկեան

ՀՈՐԻԶՈՆ www.horizonweekly.ca

ԳՐԱՒՈՒԱԾ ԹՈՒԱԿԱՆՆԵՐ

ՄՈՆԹՐԷԱԼ

«ՀՈՐԻԶՈՆ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ 40-ԱՄԵԱԿ
Շաբաթ, 14 Սեպտեմբեր 2019

ՀՕՄ-Ի ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ
6-11 Հոկտեմբեր 2019
ՄՈՆԹՐԷԱԼ

5 Հոկտեմբեր 2019
Ս. Յակոբ Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցի 40-ամեակի հանդիսութիւն
3 Նոյեմբեր 2019
Հեռուստարշաւ (Telethon) ի նպաստ Ս. Յակոբ Վարժարանի
«Վ. եւ Ա. Սարաֆեան» Նախակրթարանին
եւ «Բաստրմաճեան» Երկրորդականին

ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔ

ՀՅԴ Գանատայի Պատանեկան Միութիւններու Ընդհանուր Վարիչ Մարմինը կը շնորհաւորէ ընկ. Բաֆֆի Քէօսէեանն ու Գարին Աշզարեանը, իրենց պսակադրութեան ուրախ առթիւ:

ՀՅԴ Գանատայի Պատանեկան Միութիւններու Ընդհանուր Վարիչ Մարմինը կը շնորհաւորէ ընկ. Վանա Ֆուտուլեանն ու Սերժ Թոփալեանը, իրենց պսակադրութեան ուրախ առթիւ:

ՄՈՆԹՐԷԱԼ

ՀԱՄԵՐԳ. Յովհաննէս Թումանեանի եւ Կոմիտասի Ծննդեան 150-ամեակին առիթով- Օրհնութեամբ եւ Նախագահութեամբ Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Բարգէն Արքեպիսկոպոսին, հովանաւորութեամբ տէր եւ տիկ. Սարօ եւ Թամար Տէր Պետրոսեաններու եւ զաւակներուն, երգեցողութեամբ Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ «Նոր ծաղիկ» Մանկապատանեկան Երգչախումբին, գեղարուեստական ղեկավարութեամբ եւ խմբավարութեամբ Էլիզապէթ Պտղունի-Հարպոյեանի, դաշնակի մասնակցութեամբ Դալար Հարպոյեան-Գալլօղլեանի: Շաբաթ, 16 Նոյեմբեր 2019-ին, այլ մանրամասնութիւններ՝ յետագային:





ՀՈՐԻԶՈՆ | www.horizonweekly.ca

horizon
HORIZON
Hebdomadaire arménien
Armenian Weekly
Publié par / Published by
Les Publications Arméniennes (1991)
3401, Olivar-Asselin
Montréal, Québec
Canada H4J 1L5

Abonnement annuel / Yearly subscription
Canada
2e classe - 2nd class: $80 plus applicable taxes
1re classe - 1st class: $95
États-Unis / USA
1re classe - 1st class: $95 US
Ailleurs / Elsewhere
1re classe - 1st class: $125 US

Administration / Publicité
Sylva Ehramdjian-Bachekjian
(General Manager)
Tél.: (514) 332-3757
Télécopieur/Fax (514) 332-4870
E-Mail:sylva@horizonweekly.ca
Courrier de deuxième classe
/No. 40065294 / Second class mail
Dépôt légal: bibliothèques nationales du Québec et du Canada - ISSN 0708580X

Վարիչ Խմբագիր՝ Վահագն Դարագաշեան
Վարչական պատասխանատու՝ Սիլվա Պաշըգճեան
Քարտուղար՝ Մարինա Տէր Խաչատուրեան
Աւագ խմբագիր՝ Վրէժ-Արմէն Արթինեան
Անգլերէն/Ֆրանսերէն՝ Վիգէն Աբրահամեան, Թինա Սիլլահեան
Ձեւաւորում՝ Նէնսի Կիրակոսեան
Սրբագրիչ՝ Սոնա Թիթիզեան

Թղթակիցներ՝ Գրիգոր Հոթոյեան, (416) 494-1921
Ժաղ Վարպետեան, (416) 722-9225

Լուսանկարիչներ՝ Արմէն Ալեմեան, Մայք Թաշճեան, Իշխան Ղազարեան, Վազգէն Տէկիրմէնթաշ

Financé par le gouvernement du Canada
Funded by the Government of Canada
Canada

ԱՍՏՂԱԳՈՒԾԱԿ

ԽՈՅ (21 Մարտէն 20 Ապրիլ).- Զուարճացէք ձեր բարեկամներուն հետ, որովհետեւ այս շաբաթ լաւ առիթներ պիտի ընծայուին ձեզի: Ձեր ընկերային խառնուածքը պիտի արժեւորուի, եւ դուք շատ լաւ տպաւորութիւն պիտի գործէք ձեր շուրջիններուն վրայ: Բախտաւոր օրը Շաբաթն է, բախտաւոր թիւը՝ եօթն:

ՑՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս).- Ինչ գործի որ ձեռնարկէք, նախ վստահ եղէք, որ արդեօք գիտէ՞ք ձեր ընելիքը: Եթէ չէք գիտեր, դիմեցէք փորձառուներու, որպէսզի սխալ որոշումներ չառնէք, եւ ճիշդ հունի մէջ ըլլան ձեր ծրագիրները: Բախտաւոր օրը Հինգշաբթին է, բախտաւոր թիւը՝ մէկը:

ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս).- Եթէ զգուած էք ձեր ապրած խճողուած քաղաքին աղմուկէն կամ իրարանցումէն, շաբաթավերջը օգտագործեցէք, գացէք գիւղական շրջան մը եւ վայելեցէք խաղաղ ու հանգիստ մթնոլորտը: Բախտաւոր օրը Ուրբաթն է, բախտաւոր թիւը՝ ութն:

ԽԵՑԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս).- Եթէ ձեր ակնկալած գումարը ստանաք, պիտի գնէք ապրանք մը: Անկարելիութեան պարագային, մի՛ սրտնեղիք, համբերեցէք, պայման չէ, որ ձեր բոլոր փափաքածները ունենաք: Բախտաւոր օրը Երկուշաբթին է, բախտաւոր թիւը՝ հինգը:

ԱՌԻԾ (24 Յուլիսէն 23 Օգոստոս).- Ընդունեցէք երկխօսութեան հրաւէր մը, որպէսզի առաւել զարգանաք: Նման հանդիպումներ մերժելը վնասակար է, հետեւաբար նկատի առէք եւ ըստ այնմ որոշեցէք: Բախտաւոր օրը Չորեքշաբթին է, բախտաւոր թիւը՝ ինն:

ԿՈՅՍ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր).- Ըրէք այն, ինչ որ կը փափաքիք, առանց ուրիշին հաշիւ տալու: Այս շաբաթ ձեր անձնական ազատ կամքին ընդառաջ գացէք, չէք զղջար: Պայման չէ, որ միշտ ուրիշները գոհացնէք: Բախտաւոր օրը Շաբաթն է, բախտաւոր թիւը՝ երկուքը:

ԿՇԻՌՔ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր).- Ձեզի համար բացառիկ շաբաթ մըն է այս: Եթէ մոռցած էիք մազանքը, կրնաք մտածել այդ մասին եւս: Շրջապատուած էք ուրախ բարեկամներով եւ հարազատներով: Բախտաւոր օրը Երեքշաբթին է, բախտաւոր թիւը՝ հինգը:

ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր).- Եթէ տարեդարձի կամ այլ ուրախ առիթի նուէր մը պիտի գնէք, նկատի առէք նուէրը ստացող անձին նկարագիրը եւ ճաշակը: Յամենայնդէպս ձեր ճաշակը պիտի գնահատուի: Բախտաւոր օրը Ուրբաթն է, բախտաւոր թիւը՝ երեքը:

ԱՂԵՂՆԱՒՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր).- Հոգեկան գոհունակութեամբ պիտի աւարտէք շաբաթը, որովհետեւ ոչ միայն օգտակար եղած էք դուք ձեզի, այլեւ ձեզմէ տկար անձերու եւ կարիքաւորներու: Բախտաւոր օրը Հինգշաբթին է, բախտաւոր թիւը՝ տասն:

ԱՅԾԵՂՋԻՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար).- Շուկայի գործեր ունիք, շատ ապրանք կ՚ուզէք գնել, բայց չէք կրնար ամէն ինչ նոյն ատեն գնել: Նախընտրութիւն մը ունեցէք: Պարապ բաներու համար մի՛ վատնէք ձեր խնայած գումարները: Բախտաւոր օրը Երկուշաբթին է, բախտաւոր թիւը՝ երկուքը:

ԾՈՎԱՆՈՅՇ (21 Յունուարէն 19 Փետրուար).- Ըրէք այն, ինչ որ կ՚ուզէք, ձեր շուրջինները պիտի հետեւին ձեզի: Ձեր հեղինակութիւնը հմայիչ պիտի ըլլայ, ուրախացէք ուրեմն եւ լաւ ժամանակ անցընելու մասին մտածեցէք: Բախտաւոր թիւը՝ վեց:

ՁՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ).- Բազմատեսակ աշխատանքներ ունիք, բայց բոլորը միատեղ կարելի չէ կատարել: Դասաւորել գիտցէք նուազ յոգնելու համար: Իմաստութեամբ շարժեցէք ձեր աշխատանքներուն ընթացքին: Բախտաւոր թիւը՝ չորս:

CAMAM

3401, Olivar Asselin, Montréal, Qc H4J 1L5

397, boul. des Prairies, Laval, Qc H7N 2W6

45 Hallcrown Place, Willowdale, On M2J 4Y4

ՀՈՐԻԶՈՆ

ՀԱՍՑԷ՝ 3401 Olivar-Asselin Montréal, Québec H4J 1L5

Բաժանորդագրուեցէք «Հորիզոն» շաբաթաթերթին

ԱՆՈՒՆ-ՄԱԿԱՆՈՒՆ - - -

CHOREL
ET ASSOCIÉS
Retrouver votre équilibre de vie !
450 435-9472
RÉGLEZ VOS DETTES
RAPIDEMENT, SANS INTÉRÊT !
PROGRAMME FÉDÉRAL
(hypothèque sur maison et auto exclues)
Laissez-nous vous aider !
Vous vivez une crise financière suite à :
Perte d'emploi, séparation, maladie ou simplement piégé par la facilitée du crédit.
Signaux d'alarme :
• Le nombre de cartes de crédit détenues augmente constamment et deviennent rapidement à leur limite ;
• Vous effectuez seulement le paiement minimum requis sur vos cartes, soit seulement les intérêts ;
• Vous effectuez des avances de fonds sur vos cartes de crédit pour payer d'autres dettes ou votre épicerie ;
• Vous aimeriez prendre votre retraite mais vos mensualités vous en empêche ;
• Vous craignez de laisser des dettes à vos héritiers.
Solution : présenter une proposition de consommateur à vos créanciers. Ce n'est pas une faillite mais une entente visant à rembourser ceux-ci, sans payer d'intérêts.
• Vous conservez tous vos biens, et ce, sans exception ;
• Vous consolidez vos dettes en un seul paiement mensuel, fait à l'administrateur désigné, établi selon votre budget ;
• Vous ne payez plus d'intérêt, mais seulement le capital ;
• Les états de compte cessent définitivement ;
• Les honoraires de l'administrateur sont assumés par les créanciers, le service est donc gratuit pour vous.
UNE EXPERTISE DE 23 ANS !
Consultation sans frais
Par : Danielle Chorel, B.A.A
Comptabilité (comptable agréée de 1989 à 2009), SAI
450 435-9472
MEMBRE
AQPRI
Blainville : 28, chemin Côte St-Louis Ouest,
suite 105 / près de Curé-Labelle, J7C 1B8
450 435-9472 www.chorel.ca
L'administrateur de proposition est nommé par le gouvernement et est la seule personne autorisée pour administrer légalement, et en toute confiance, une proposition de consommateur. Le processus est encadré par un agent qui surveille et s'assure de l'intégrité de l'administrateur et de l'application des règles et de la loi. N'hésitez pas à communiquer avec nous pour vérifier si cette solution conviendrait à votre situation.

BARRY KAREN GARO

KAZANDJIAN

788 000$
2170 RUE DUDEMAINE

1 950 000$
6105 BOUL. GOUIN O

748 000$
4185 BOUL. GOUIN O.

385 000$
2362 RUE HARRIET-QUIMBY

798 000$
841 RUE PRINCIPALE

359 000$
34 RUE CREPEAU APP.412

778 000$
3525 RUE TETRAULT

1 749 000$
7002-7018 RUE ST-HUBERT

265 000$
2356 RUE HARRIET-QUIMBY

3 388 000$
3740 RUE PIERRE-DAVIAULT

2 988 000$
4105 RUE CLAUDE-HENRI-GRIGNON

699 000$
74C RUE STE-ANNE

169 000$
25 BOUL. BELLEROSE E app.401

249 000$
740 BOUL. MONTPELLIER, APP. 1708

798 000$
AV. DU BEAU-BOIS

EXPERTISE EXPÉRIENCE EXCELLENCE

CLASSÉS PARMI LES MEILLEURS COURTIERS RE/MAX AU NIVEAU MONDIAL
RANKED AMONGST THE HIGHEST PERFORMING RE/MAX BROKERS WORLDWIDE

RE/MAX 3000
AGENCE IMMOBILIÈRE

SIÈGE SOCIAL: 9280 L'ACADIE, MONTRÉAL, QC H4N 3C5
PAVILLON: 2500 DES NATIONS 102, SAINT-LAURENT, QC H4R 3J9

Horizon, 3401, Olivar-Asselin, Montréal, Québec Canada H4J 1L5 Courrier de deuxième classe /No. 40065294 / Second class mail